

«DROSCHAK»

REVUE MENSUELLE

organe

de la F. R. A. D

ԴՐՕՇԱԿ

№ 4 AVRIL

1926

PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՆԱՆՆԵՎՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցեալ Փետրւարին արտասահմանեան մասնուլին Հաղորդած հեռագրերն եւ նամակներ կը տեղեկա-
ցնէին Հարիւրաւոր ձերբակալութիւններ, որոնք տեղի ունեցած էին Հայաստանի մէջ, Յունւարի սկիզբները:

Այս մասին բացարձակ լուսթիւն կը պահէր խորհրդալին մասնուլը, իսկ արտասահմանեան Հակադաշ-
նակցական թերթերը, սովորականին պէս աճապարեցին «տատո», «չերիւրածոյ» եւն. Հոչակի ձերբակալութեանց
լուրը. եւ իրենց մէկ օրկանը աւելի առաջ երթալով, «պաշտօնական հերքում» մըն ալ բերել տուաւ Երեւանէն:

Է. Յ. Դաշնակցութեան Իւրօն, որ աչալընութեամբ կը հետազոտէր խնդիրը առաջին օրէն իսկ,
ներկայիս լրացուցած ըլլալով իր գնութիւնը, ՚ի վիճակի է պաշտօնապէս Հաստատելու, թէ ԲԱՅԱՐԱԿԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՃԻՇՏ ԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ Թէ, շատերը մինչև այսօր կը տառապին բանտերու մէջ, իսկ շատերն
ալ արտուած են Ռուսաստանի խորքերը:

Հայաստանի սահմաններուն մէջ առաջին օրերուն ձերբակալուած են. Երրակի շրջան՝ 42 հոգի, Ալու-
զետով 2, Էջմիածին 15, Կոտայք 5, Ղամաղրու 2, Դիլիջան 10, Դարալագեազ 12, Զանգեզուր 11, Երեւան
89, Երեւանի գնետրական եւ Հրամանատարական կազմէն 40:

Այնուհետեւ ձերբակալութիւնները շարունակուած են փոքր ընդհատումներով, միշտ վառ պահելու
Համար ահ ու սարսափը: Մասնաւորապէս Էջմիածին ձերբակալուած են շարք մը ուսանողներ եւ գնետր-
ներ: Այս ձերբակալուածներու թիւը ինչպէս եւ խորհրդալին միւս երկիրներու մէջ ձերբակալուած ֆայերութիւյ
դեռ եւս ստուգման կը կարօտի:

Բանտարկեալները, որոնց մեծամասնութիւնը ռուսացիներ, ուսանողներ եւ գիւղացիներ կը կազմեն,
գծնդակ վիճակի մը դատապարտուած են, Զեկալի խոնաւ նկուղներուն մէջ, թէ բարոյապէս եւ թէ ֆիզիքա-
պէս:

Բոլշեւիկեան բռնակալութեան առաջին քաջագործութիւնը չէ այս, անպաշտպան զոհերու հանդէպ:
Այդ իշխանութիւնը միջոցներու մէջ խտրութիւն չի դներ, անաստան պահելու համար իր լուծը. պատրա-
ւակներն ալ ինքն է որ կը հնարէ, ինչպէս ներկայ պարագային:

Բայց իր իսկ ձեռքով կը փորէ իր Հիմքերը, ձախտագրական է այս ահաբեկչական քաղաքակա-
նութեան վախճանը:

Եւ զոհերը շատ լաւ գիտեն այդ պարագան, երբ աներկիւղ կը դիմադրուեն ամէն վտանգի, կը տա-
կան անկուր չարչարանքներու:

ԶՈՒՐ ՅՈՅՍԵՐ ԵՒ ԶՈՒՐ ԶԱՆՔԵՐ

Մեր ընթերցողները «Գրօշակի» նախորդ թիւից զիտնելու, որ ս'հզլս կան Անկախ Բանուորական կուսակցութիւնը առաջարկել է Ա. Ը. Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէին մի խորհրդատուով կազմել Կոմունիստական Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէի Հետ միասին՝ երկու կազմակերպութիւնների միացման խնդիրը քննելու համար:

Տարիներից ի վեր, այլ և այլ առիթներով հրապարակ դրւող այս խնդիրը իր հիմնաւորման համար միշտ ելնում է այն տխուր փաստից, որ ընկերվարական և կոմունիստական կուսակցութիւնների ներհակութեան պատճառով, համաշխարհային աշխատաւորութեան այսօր վեր է ածել հակադիր, մինչև անգամ թշնամի բանակների, իսկ օրա հետեանքով աշխատաւորութեան ուժը ջլատել է այն աստիճան, որ նա ոչ միայն չի կարող խոշոր պայքարների ձեռնամուխ լինել իր քաղաքական, ընկերային և տնտեսական խելային իրագործելու համար, այլ և պիտի դաւարանայ արդէն կատարած նւաճումները պահել իր ձեռքին: Այս փաստը խորին դառնութեամբ է համակում ամէն մի սրտացաւ ընկերվարականի, մահաւանդ ի տես այն յախուռն հակապարձակման, որին անցել է այժմս կապիտալիզմը՝ յետպատերազմեայ ցնցումների ժամանակ կորցրած դիրքերը վերականգնելու համար: — Թեւաւորած աշխատաւորութեան ներքին բզբտումներով, որոնք շատ տեղերում միանգամայն անդամալուծել են նրա չեղափոխական կողմը՝ կապիտալիզմը, մե'րթ քաջայայտ Փաշիստական մեթոդներով, մե'րթ հակապետափոխութեան աւելի՛ ներքին ձեւերով, այսօր մի շարք երկրներում պատին է սեղմել աշխատաւորութիւնը, իսկ շատ երկրներում է սպառնում է վայր զրորել նրան զրաւած բարձունքներից: Հասկանալի է, ի հարկէ, որ այս կացութեան մէջ ընկերվարականները չեն կարող տնտարբեր մնալ դեպի այն պառակտումները, որոնք արգելք են հանդիսանում աշխատաւորութեանը՝ միացնելու իր ուժերը և հակահարած տալու շփացած թշնամուն:

Սակայն ինչպէ՞ս զլոյս բերել այս միացումը: Պառակտումն առաջացել է այն պատճառով, որ կոմունիստները ընկերվարական պայքարի դարտուղի ձեւեր են որդիգրել, որոնք ներդաշնակութեան մէջ չեն գտնում ո՛չ դասակարգային պայքարի աւանդութիւնների հետ ո՛չ էլ աշխատաւորական հոկայ զանգաւանների այժմեան սրամագրութիւնների հետ: Ինչ-

պէ՞ս անել, որ ստեղծւի տեսակետների և գործելակերպի ներդաշնակութիւնը այս տարածքի հատուկների միջև, կամ ի՞նչ կարելու թիւնների կան դրա համար:

Անդլիական Անկախ Աշխատաւորական Կուսակցութիւնը իր առաջարկը պատճառաբանում է նրանով, որ Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը — կամ փաստօրէն ինքը Երրորդ Ինտերնասիոնալը — որը մինչև հիմա զիսաւոր խոչընդոտն է եղել միացման գործում ներկայումս հակաձեռն է երևում ձեռք քաշելու պառակտիչ դիրքից: Մտ նշանը նա տեսնում է պառակտման չար ոգու — Զինովի մեկուսացման մէջ, Տոսկու հաշտարար ձուտերի մէջ, Խորհրդային Միութեան նահանջների մէջ տնտեսական-ընկերային խնդիրներում էն: Սակայն բաւարար են այսօրինակ նշանները կատարելու համար մի քայլ, որը, դրական վախճանի չլանգիլու դեպքում, անխուստփիտօրէն աւելի՛ ևս պիտի բորբոքի կրքերը և լարի չարաբերութիւնները աշխատաւորական տարբեր հատուկների միջև: Այս հարցին պատասխանելու համար պէտք է աչքի առաջ ունենալ այն քաղաքականութիւնը, որը հետապնդել է շարունակ կոմունիստների կողմից՝ միացման գործում:

Մինչև 1921 թիւը կոմունիստները քաջայայտ թշնամութեամբ էին վերաբերում ընկերվարական կուսակցութիւնների հետ որ և է որք ունենալու մտքին: Մի կողմից՝ վստահ, որ իրենց ընձեռնած հասարակարգի փորձերը կարճ ժամանակում դրական արդունք են տալու, իսկ միւս կողմից՝ համոզւած, որ համաշխարհային լեղափոխութիւնը ամիսների և մինչև իսկ շաբաթների խնդիր է, նրանք տարակույս չունէին, որ «տցիւր-դաւաճանները» կազմակերպութիւնները անգամ առանց արտաքին ճնշումների, իրենք իրենց պիտի քայքայեն, անհետանան: Այս պայմաններում արժէ՞ր նրանց հետ համաձայնութեան գալու մասին խօսել:

Սակայն 1921-ից սկսած հիստօրիութիւնների մէ շրջան է քաջում կոմունիստների համար: Իսկ նրանց նոր տնտեսակարգի փորձերը ոչ միայն որ և է դրական հետեւանք չեն տալիս, այլ և կատարեալ քայքայման են մատնում Ռուսաստանի տնտեսութիւնը: Անուհետև՝ համաշխարհային լեղափոխութիւնը շուտափոյթ ժամանման ոչ մի նշան չէ ցոյց տալիս, մինչդեռ համաշխարհային հակաչեղափոխութիւնը Եւրոպայի այս ու այն անկիւնից բարձրացնում է իր սև գլուխը: Եւ վերջապէս ընկերվարական կուսակցութիւնները փոխանակ մեւնելո՝ օր-ուտօր շարժում են

պատերազմի հարաձեներից և խտացնում իրենց շարքերը:

Այս իրադարձութիւնները նոր տնտեսական և ընկերային քաղաքականութեան հարկադրանքը դնելով կոմունիստների վրայ՝ միաժամանակ նրանց մէջ տրամադրութիւններ են արժարժում այս կամ այն ձևով մերձնալու ընկերվարական դրօշի տակ կանգնած աշխատատեղական զանգաձեներին:

Ճանկանալով օգտագործել այս տրամադրութիւնը աշխատատեղական զանգաձեների միացման համար՝ Վեննայի Ինտերնասիոնալը, որը այդ միացումն իր կէտ-նպատակն էր դարձրել՝ հրաւիրում է երեք Ինտերնասիոնալների գործադիր կոմիտէներէ մի խորհրդաժողով, որը տեղի է ունենում 1922-ի Ապրիլին, Քերկինում: Խորհրդաժողովը առաջին հերթին ճշտում է, որ Երրորդ և միւս Ինտերնասիոնալների միացման մասին խօսք լինել չի կարող. նրանց կազմակերպական սկզբունքներն ու գործնէութեան եղանակներն այնքան տարբեր էին իրարից, որ այս հողի վրայ համաձայնութեան որ և է եզր գտնելն անհնարին էր: Միակ բանը, որ կարելի էր որոշ պայմաններով գրուի բերել՝ դա միջոգային կապիտալի և նրա հրահրած հակաշեղագոփոխութեան դէմ միացեալ ճակատ կազմելն էր: Իր աշխատանքներն այս հուշի մէջ դնելով՝ Խորհրդաժողովը Ապրիլի 5-ի նիստին սկզբունքային համաձայնութիւն է կայացնում այն պայմանների շուրջը, որոնք հիմք պետք է դառնային ընկերվարական և կոմունիստական կուսակցութիւնների համար միացեալ ճակատով գործելու: Սակայն Մայիսի 23-ին, երբ խորհրդաժողովից ընտրւած Թի կոմիտէն պետք է ճշդէր այդ պայմանների գործադրութեան միջոցները Երրորդ Ինտերնասիոնալի ներկայացուցիչները կոպիտ կերպով զրծում են իրենց յանձնառութիւնները, և այսպիսով ամբողջ աշխատանքը ջուրն է ընկնում:

Այս յանկարծակի դիմադրաձեւութիւնը՝ միացեալ ճակատից սկզբում շատերի համար անբացատրելի էր. բայց վեց ամիս յետոյ, Կոմունիստական Ինտերնասիոնալի IV համագումարում ամէն ինչ պարզեց, և պարզեց Ռադէկի բերանով: Նրա ասելով կոմունիստները Քերկինի խորհրդաժողովին զայիս ամենեւին մտադիր չեն եղել միութիւն կամ միացեալ ճակատ կազմելու: Նրանց նպատակն է եղել «ընկերվարականներին պատին սեղմելու առաջին փորձը» կատարել: Թէ ի՞նչ ստոր նպատակներ են առաջադրած եղի կոմունիստները աշխատատեղութեան ընդհանուր թըշնամու դէմ միացեալ ճակատ կազմելու զազափարն արժարձելիս՝ այդ երևում է Ռադէկի հետեւեալ խօսքերից.

«Միացեալ ճակատի ուղին անելի՛ դժարին է, «քան մեր տակտիկը 1919-ին, երբ մենք առում էինք «ջախջախեցէք բոլորին միանգամից», Միանգամից բոլորին ջախջախելը անհամեմատ ավելի «դիւրին և անելի՛ հաճելի կլինէր, բայց երբ դա «համար ոչ չկայ և երբ անհրաժեշտ է (միացեալ ճակատի) այս ճանապարհը բռնել՝ պարտաւորանք ենք նրանով ընթանալ... վստահ լինելով, որ «դրանից վնասուղը մենք չպէտք է լինենք այս «ընկերվարականները... և համոզուած լինելով որ «նրանց գրկելով պիտի խեղդենք...»

Որ այսպիսի վերաբերմունքից յետոյ այլևս՝ որ և է խօսք լինել չէր կարող ընկերվարականների կողմից կոմունիստներին հետ միացեալ ճակատ կազմելու համար-դա ըստ ինքեան հասկանալի է: Այդ պատճառով էլ 1922-ից ի վեր Ընկերվարական Ինտերնասիոնալը այդ խնդիրն իր համար չեղեալ է համարում, թէև դրանով նա չի զարարում միջոգային աշխատատեղութեան միացման համար խորհուրդ:

Տեսնելով որ այս ճանապարհը միանգամ ընդմիշտ փակած է իրենց առաջ՝ մուտք գործելու համար դէպի Երրորդի աշխատատեղական զանգաձեները՝ կոմունիստներն այնուհետև Ամստերդամի ուղին են բռնում այդ զանգաձեներին հասնելու համար: Այստեղ նրանց քայլաձեւը շատ վճռական երևուցնում է: Այն մարդիկ, որոնք Կարմիր Արհեստակցութիւնների Ինտերնասիոնալ են ստեղծել միայն և միմիայն Ամստերդամի Արհեստակցական Ինտերնասիոնալը քայքայելու նպատակով, սարդիկ, որոնք այդ «դեղին», «կապիտալիզմի ձեռնասուռ» Ինտերնասիոնալը վարկաբեկելու համար ոչ մի զբաղաբարութեան, ոչ մի դուադրութեան առաջ կանգ չեն առել՝ այժմ ամէն ճիգ գործ են դնում նրան մերձենալու, և ոչ միայն մերձենալու, այլ և միաձուլելու նրա հետ... Այս ձգտումը արտայայտում է Կարմիր Արհ. Ինտերնասիոնալի պարագլխներից մէկը Լազովսկին, անցեալ Մարտ ամսին, Կոմունիստական Ինտերնասիոնալի Գործադիր Կոմիտէի առաջ, հետեւեալ ձևով.

«Մենք մի վերին աստիճանի պարզ միջոց ենք «առաջադրում Մեր տաղարին է, Ամստերդամի և «Կարմիր Արհ. Ինտերնասիոնալի փոխադարձ համաձայնութեամբ հրաւիրել մի համաշխարհային արհեստակցական համագումար, որին պիտի մասնակցեն Կարմիր Արհ. Ինտերնասիոնալին և «Ամստերդամին յարող բոլոր կազմակերպութիւնները, ինչպէս և այն կազմակերպութիւնները որոնք այս երկուսի մէջտեղն են գտնուում Որ-

սպէսի մեծ երկրների բանտարան կազմակերպութիւնների Համար Համազատաբան ազդեցութիւն ասպահոված լինի (Համադրամարում), մենք առաջարկում ենք Համեմատական ներկայացուցչութիւն Մենք առաջ առ յայտարարում ենք, որ Կարմիր Արշ. Ինտերնասիոնալը կը ստեղծուի և կը ձևաւորուի Ինտերնասիոնալի մէջ: Մենք յայտարարում ենք, որ Կարմիր Արշ. Ինտերնասիոնալը կը ստեղծուի և կը ձևաւորուի Կարմիր Արշ. Ինտերնասիոնալի մէջ: Մենք առաջարկում ենք ընկերավարականներին մտնել խոստումը տալ: Երկու կողմերն էլ ազատ են ազդեցութիւն անելու և պրոպագանդ մղելու «միացնող կազմակերպութեան» ծոցում:

Սա դուռնու աջ անվերապահ անձնատուութիւնը չէ, որ պահանջում է Ամստերդամը Լազովսկիներից և Տոմսկիներից: Լիակատար անձնատուութեան Համար նրանք պէտք է մի քայլ էլ անեն և առանց առարկութեան ընդունեն Ամստերդամի Ինտերնասիոնալի ծրագիրն ու կանոնադրութիւնը, որպէսզի սրա դռները բացեն կարմիրների առաջ: Բայց և այնպէս արտաքուստ սա մի խոշոր թուխք է Կարմիր Արշ. Ինտերնասիոնալի կանոնադրութիւնից, ըստ որի այդ Ինտերնասիոնալի մէջ կարող են ընդունել միայն այն արհեստակցական միութիւնները, որոնք «իզել են ամէն մի յարաբերութիւն Ամստերդամի դեղին Ինտերնասիոնալի Հետ»:

Ասում ենք արտաքուստ որովհետեւ ճանաչելով կոմունիստների մարդկային նկարագիրը, երբեք չենք կարող նրանց այսօրինակ յայտարարութիւններն անկեղծ Համարել: Լենինի դպրոցից անցած, կոմունիստը իր Հակաաւերդի, անգամ մաքուր, գաղափարական Հակաաւերդի Հանդէպ անկարող է, օրգանապէս անկարող, անկեղծ և շիտակ լինել: Լազովսկու յայտարարութիւնը նոյն պատճառներից զրգած նոյն խաղն է, որ կատարում էին նրա ընկերակիցները Բերլինի խորհրդատուի ժամանակ: Տեսնելով որ տարիներ շարունակ մերթ ճակատից զարկելով մերթ կողքերից Հարածելով չեն կարողացնում տեղից շարժել Ամստերդամի Ինտերնասիոնալը՝ կոմունիստներն այժմ ցանկանում են մտնել նրա մէջը և ներսից պայթեցնել: Եւ ահա բոլորը, Ըստ էութեան սա Հակաաւերդին գրկելով լեզու և ձեռք բաղադրականութիւն է, որի մասին այնքան ցինիկ կերպով խօսում է Ռադկելը: Միայն, որովհետեւ կոմունիստների վիճակն այսօր շատ է տարբերում 1922ի

վիճակից՝ Լազովսկին ծրարում է իր մտադրութիւնները շունչալից յայտարարութիւնների մէջ — ուրիշ ոչինչ:

Եթէ անգլիական Անկախ Աշխատաւորական Կուսակցութիւնը անտես չառնէր կոմունիստների այս նկարագիրը, նո անկասկած Տոմսկու և նրա ընկերակիցների քաղաքական յայտարարութիւններին այլ արժէք կտար: Բարեբաղդաբար այն, ինչ որ նա չի տեսնում, տեսնում են միւս ընկերավարական կուսակցութիւնները: Եւ դրա Համար էլ նրանք դեռ մտում են կանգնած այն տեսակետի վրայ, որը լաշոյ կերպով ձեռակերպեց Համբուրգի Համադրամարին Բեյթիկալի ներկայացուցիչ ընկ. Իւ Բրիւքելը, ասելով. «Կոմունիստների շուրջը պէտք է պահանջ մեր բարոյական կարանտիներ, մինչև որ նրանք վարժեն այնիս մարդիկ դառնալ, որից չեսոյ թերևս դժար չլինի նրանց Հետ Հասկացողութեան դար...»

Սակայն անկախ այս տարբերութիւն Համադրամարից էլ մենք չենք կարողանում Հասկանալ, թէ մեր անգլիացի ընկերները ինչպէս են պատկերացնում միութիւնը կոմունիստների Հետ: Ընդունենք մի բայէ, որ ընկերավարականները աշխատաւորութեան միացման վե՛հ գործին ստորալիցով բոլոր նկատմանքը՝ Հրաժարեցին այն պահանջներից, որոնք մինչև Հիմա առաջ են քաշել նրանց կողմից միութեան Համար եղած պաշտօնական և անպաշտօն բանակցութիւնների ժամանակ, բայց չէ՛ որ նրանք չեն կարող Հրաժարել պնդելուց, որ խորհրդակցի երկրներում կուսակցական գործեութիւնը կոմունիստների մենաշնորհը չլինի, որ այնտեղ, գոնէ ընկերավարական կուսակցութիւններն այստ լինեն գործելու: Անշուշտ ոչ: Սա անգլիացի ընկերներն էլ այդ պահանջը *conditio sine qua non* են նկատում միութեան կամ Համաձայնութեան Համար: Արդ, նրանք ի՞նչ են կարծում. կոմունիստները կարո՞ղ են ընդունել այս պահանջը: Կարո՞ղ են նրանք Հաշտուել այն դրութեան Հետ, որ վաղը Ռուս. Սոցիալ-Դեմոկրատիան, Սոց. Յեղափոխականների կուսակցութիւնը, Վրաց Մենշևիկները, Միսիստները, Լ. Յ. Գաշապուցութիւնը ևն Հաստատեն խորհրդակցի երկրներում և իրենց մատուցով, միտնանալով, պրոպագանդով թէկու՞ ամեն արժէքով պայքարը մղեն—չենք ասում տիրող կարգերի, այ նրանցից բոլոր ախտաւոր երեւութիւնների դէմ:

Ինչպէս երևում է, անգլիացի ընկերները միաձուլութիւն ունեն կարծելու, թէ այսպիսի մի դրութիւն անպատեհութիւն չի ներկայացնում կոմունիստների

Համար: Որովհետև — մտածում են նրանք — պետական իշխանությունը կոմունիստների ձեռքին, պաշտօնները նոյնպես, ձառույր նոյնպես, պետական միջոցները պես-պես ձեռնարկ արամադրելի կոմունիստական կուսակցություն պետքերի Համար, կոմունիստները, ինչպես իրենք են Հաստատացնում, ամենայն էւ ունեղով աշխատում են երկրի վերաշինութեան Համար, երկրագործութիւնը նրանց շնորհիւ ոտքի է կանգնել, արդիւնագործութիւնը գրեթէ Հասել է նախապատերազմեան վիճակին և այժմ սոցիալիստական ձեւեր է առնում, արդիւնագործական բանտարութիւնն ու գիւղացիութիւնը բանտար-գիւղացիական իշխանութեան տակ են կրկնում. այսպիսի պայմաններում ի՞նչ երկրի կարող են ունենալ կոմունիստները մի քանի կուսակցական խմբակցութիւններից և նրանց լրիճով թուռցիկներից ու թերթերից, որ սրանց պատճառով վիժեցնեն Համաշխարհային աշխատաւորութիւնը միացնելու և միջազգային կապիտալիզմի դէմ Հանելու հակապետական գործը...

Ծրամաբանորէն այս դատարարութիւնը անասարկելի է: Եւ եղբակցութիւնն էլ անպայման ճիշտ կլինէր, եթէ նրա նախադրեալները ճիշտ լինէին, կամ ուրիշ խօսքով՝ եթէ խորհրդային երկրների իրականութիւնն այն լինէր, ինչ որ ներկայացնում են կոմունիստները: Իսկ որ իրականութիւնն այդպէս չէ, դա, անկարգ ար և է փաստական տեղեկութիւնից, կարելի է Հետեւցնել Հէկց այն հանգամանքից, որ անգամ այսօր, երբ բազմաբնակիւ կուսակցութիւնը վերջացել են և խորհրդային իրուակարգին որ և է աւանձին վտանգ չի սպառնում, կոմունիստներն այնուամենայնիւ մահու չափ վախենում են ընկերակարական կուսակցութիւնների մրցութիւնից:

Եւ խոստովանում ենք, որ այս դեպքում կոմունիստներն տեղի իրատես են, քան անգլիացի ընկերակարականները: Նրանք շատ լաւ գիտեն, թէ ինչի վրայ է Հիմնւած իրենց տիրապետութիւնը: Արտաքին գործածութեան Համար նրանք կարող են ճառել բանտար-գիւղացիական գանդաճանքի Համակրանքի մասին, բայց ներքնպէս չեն անգիտանում, թէ Հարկէ, որ այդ տիրապետութիւնը պահւում է բացասապէս բանի ուժի միջոցով: Իսկ որովհետև ազատ խօսքն ու պայքարը վտա զաշնակից են բանապետութեան Համար, այդ պատճառով էլ նրանք երբէք կամովին չեն կարող ազատ գործնէութեան ասպարէզ յայ ընկերակարական կուսակցութիւններին կամ Հրամարել իրենց կուսակցական մենաշնորհից:

Եթէ այս այսպէս է, ապա Հասկանալի է, որ

անգլիացի ընկերակարականների յիշերն ու ջանքերը դատապարտած են ամուլութեանս:

Սակայն սրանից չպէտք է Հետեւցնել, թէ միջազգային աշխատաւորութեան միութիւնը անիրագործելի ցնորք է: Երբէք Այդ միութիւնը անիրագործելի լիորէն պիտի տեղի ունենայ, բայց ե՞ թէ կոմունիստական Իստերնաօրիտալի գործակցութեամբ, այլ նրա փլատակների վրայ: Աշխատաւորական այն գանգաճանքը, որոնք գեւ ևս բացում են այդ Իստերնաօրիտալի դրօշի տակ, վաղ թէ Եւ պիտի դիտակցեն, որ իրենք շեղակով դատակարգային պայքարի փորձւած ուղիներէց, որոնցով մինչև օրս յաղթանակից յաղթանակ են գնացել՝ ոչինչ չեն շահել, բայց շատ բան կորցրել են: Նրանք պիտի հաստատանան, որ Կոմունիստական Իստերնաօրիտալը գեւ զեցիկ գործերը գեղեցիկ խօսքերին դահլու իր մարմնաժողով մեռցնում է իրենց մէջ կենդանի աշխատանքի սերը և առօրեայ կեանքի պահանջներին ընդօրոշելու արամադրութիւնը: Վերջապէս նրանք պէտք է Համուկեն, որ այլ Իստերնաօրիտալը, որ միջոցների մէջ խարութիւն դնել չգիտէ, որ միտեղ կաշառքով ու շողորթութեամբ է Հետապնդում իր նպատակներին, միւս տեղ սպառնալիքով, երբորդ տեղը դատարարութիւններով, չորրորդ տեղը ստով ու կեղծիքով՝ պայանդաւում է աշխատաւորութեան բարբերը, առնութիւն և ներհակութիւն սերմանում նրա մէջ, Հրահրում պատակտման քնապնները և այսպիսով բշխարաւորութիւնը վաքք իջեցնում Հոստապետական և բուրաքակրթական կեանքի այն բարձունքներից, որոնց նա Հասել է իր յատու և յոգնաշուն աշխատանքի միջոցով:

Աշխատաւորութեան միացման երաշխիքը ահա այս գիտակցութեան և Համոզմունքի մէջ պէտք է որոնել: Եւ եթէ դատելու լինեք ան փառախօս, որ, ինչպէս ցոյց են տալիս վերջին վիճակագրական տեղեկութիւնները, գրեթէ բոլոր երկրներում կոմունիստական կուսակցութիւնները նազում են քանակով և որակով, նազում են, որովհետև գիտակցից աշխատաւորութիւնը երես է դարձնում նրանցից՝ պիտի գանք այն եղբակցութեան, որ միութեան գործն արդէն Հաստատուն ընթացքի մէջ է մտել, թէ և այլ ընթացքն այն չէ, ինչ որ անգլիական Անկախ Աշխատաւորական Կուսակցութիւնն է պատկերացնում:

ՍՏՐԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Հայրէջքի կենտրոնը քաղաքական վարչապետը անդրադարձնուած թորը ինքզինքնուր բարեկարգելու հետեւ իրաւունքը իրաւունքը անվերապահ համակերպուելու:

Մեր ժողովուրդը իր արկածային պատմութեան փորձերից իրարացել է մի հզօղմաշ քաղաքական խրատ, որ ժողովրդական աստղածրքի ձեւ է առել: Այն ձեւքը, որ չեա կարողանում կարել՝ հոմոսոփիա և ճակատող զիր: Աճէն մի ճնշման և անէն մի անարդարութեան դէմ «ընդ վրոյ» մեր nec plus ultra «կարմիր յեղափոխականները» մի նոր ձեւակերպութիւն են առել այս խրատին:— ամեն մի ձեւէ, որ կտառո՞ղ է կեց յոգնութիւն կամ անխառն-ժողովուն պատճառով՝ համարուի որ հակադէմ զիր:

Ժողովրդական աստղածրքը, որքան էլ անհամապատասխան լինի այն մարդկանց տրամադրութիւններին, որոնք Մարտի 9-րդու հետեւողութեամբ «բաշխել խելայեղութեան գոլը են երգում», կամ Գոմարտի պէս յանդիմանութեան մէջ են անհուն թորը հաւասար և անհասարակ զայբարեկերի յարգութեան երաշխիքը — այնուամենայնիւ ունի իր մէջ մի արդարացուցիչ բացատրութիւն: Այդ այն է, որ ժողովուրդը պայմանաւորում է համակերպութիւնը ուժեղ հակառակորդի վտանգաւորութեամբ և իր դիմադրական ուժի սկզբութեամբ: Իս յայտարարում է, որ իր դէմ բարձրացած մեռը տնորդար՝ է և կորելու արժանի: զրանով իսկ նա իր ցանկութիւնը, ձգտումն է դրեւորում ձուռնալու: Իս դէմ, բայց արարհաստեայ ստիպւած է խոնարհել նրա առաջ, որովհետեւ չի կարողանում, ոչ չունի նրան յղթահարելու կամ կորելու: Հայ բոլշեակներին համակերպութիւնը այս արդարացուցիչ հանգամանքն էլ չունի: Իրանք խոնարհուած են մեր ժողովրդի դէմ բարձրացող ամէն ձեւ քի առաջ անձայն ու անձատու, խոնարհուած են ոչ միայն անասունների, այլ և պահանջով որ ամէնքը էլ անտես առնեն բռնութեան և անարդարութեան փաստը, խոնարհուած են ոչ միայն այն դէպքում, երբ ընդվզուց կարող է վտանգ սպառնալ հայ ժողովրդին, այլ և երբ այդ վտանգի հնարաւորութիւնն իսկ չկայ մէջտեղը: Հայ բոլշեակներին համակերպութիւնն անվերապահ է, ստրկական բռնի բռն իմաստով:—

Աղբիւրը ունաստիկ անելով Հայաստանի անաստեակն շտհերը ուղում է իր սահմանների մէջ պահել Շարու-Նախիչեանը:— Թո՞ղ այդպէս լինի: արովհետեւ ինչպէս կարելի է հաշիկ չառնել այն փաստը, որ Շարու-Նախիչեանում Թուրքերը մեծամասնութիւն են կազմում: Ինչպէ՞ս կարելի ազգերի ինքնորոշման իրաւունքը ստորագրուել Հայաստանի անաստեակն շահերին:

Աղբիւրը առ ոչինչ համարելով ազգերի ինքնորոշման իրաւունքը իր մտկերի մէջ է առել իռնալիս Գանձակն ու Արարաղը:— Այդպէս էլ պէտք է լինի: որովհետեւ ինչ արժեք ունի ինքնորոշման սկզբունքը, երբ այդ գաւառներն այնքան անհարթեալ են Աղբիւրը անաստեակն շահերին:

Հայաստանում զգո՞հ են, որ Աղբիւրը՝ մի անգամ ընդմիջաւ Արարաղին ու Ջանգեղուն իրարից անջատելու համար՝ նրանց միջեւ, իրրեւ պատար, մի ինքնավար

չաջի Սամյու է ստեղծել:— Ետտ ի դուր, որովհետեւ ինչ նշանակութիւն ունին խորհրդային երկրների փոխարարութեանց մէջ «պատարները», կամ ինչպէ՞ս կարելի է նման նկատաւնելով դէմ լինել Հայի Սամյուի քուրդ բնակչութեան ինքնորոշման իրաւունքին:

Արաստանը չի՞ ուղում յոգում Հայաստանի հրաժարել հայկական Տաշիրից, չնայած որ Արացիք այնտեղ չնչին փոքրամասնութիւն են կազմում:— Եւ իրաւունք ունի: որովհետեւ չէ՞ որ Տաշիրը պատար է հանդիսանում Հայաստանի և Թիֆլիսի միջև:

Արաստանը ստեղծուած անաստեակն անաստեակն շահերը և՛ բարի սկզբունքը և՛ Հայաստանի նկատմամբ երկաթեայ օղակի մէջ է առել Արարաղը:— Այդ էլ իր իրաւունքն է, որովհետեւ... այդպէս է ուղում: Այլ բացատրութիւն այս ստրկաւոր անարդարութեան համար մենք չենք գտնում անգամ հայ բոլշեակներին մօտ:

Թիւրքերն իզմիրում սրախողի՞ր՞ է անում հազարաւոր անպաշտպան հայերի կամ որը ցերեկով թալանու՞մ է հայկական հայրի ինչքն ու գոյքը:— Այդ իր գործն է: ո՞վ իրաւունք ունի խառնելու: օտար պետութեան ներքին գործերին:

Հայաստանում միմաղում են, որ Առաջուրի և Մոլլա Դուրանի «կոմբընջները», խառնելով Փրանսայի ներքին գործերին, բողբի ցոյցեր են կազմակերպում գերմանացիների ձեռնման և Ռուրի ամխահանքերի բռնադրաման դէմ:— Կրկին ի՞ դուր: չէ՞ որ Մոսկովան ու Թիֆլիսն էլ նայն են անում:...

Սրանք հայ բոլշեակներին համարելով ներազարծուած այն ձեռքերն են, որոնք ճօճում են օդում այնքան բարձր արեքան ակնբախ՞ որ անդամ կայր ձեւացողներն էլ չեն կարող չտանել: Բայց ցանի՞ քանի՞ այսօրինակ ձեռքեր կան, որոնք համարուած են լայն հասարակութեան աչքից հեռու, ներքին անտեսներում, կանաչ և կարմիր ոնգաններին շուրջի ու տակը:...

Ինչպէ՞ր բացատրուած հայ բոլշեակներին անձուռնջ համակերպութիւնը մեր ժողովրդի համար այսքան կենսական ինդիկներում: Միթէ որանք նայն մարդիկ չեն, որոնք 1920 թի վերջերին անհնջ ու լուսնայն էին թափուած Հայաստանի Կառավարութեան և Դաշնակցութեան գլխին, որովհետեւ նրանք Արարաղը պարտուած համաձայնել էին Հայաստանի մի մասը դիջել յաղթական Թիւրքերին՝ միւս մասը նրանց ներկուսումից ու ւեւրից ազատելու համար: Եթէ նայն մարդիկ են, բայց այսօր քաղաքականապէս հաւանացել են այն աստիճան, որ այլեւ թոյլի համակերպութիւնը անպատեհ չեն համարում, երբ զրանով նա կարող է իր կեանքն ազատել զօրեղ հակառակորդի մահացու հարձակոցի՞ այդ դէպքում նորից հարց է մտնում, միթէ հայ բոլշեակները համոտիրակելու նոյն հակարարի քի տակ են դրած, ինչ որ Հայաստանի կառավարութիւնն ու Դաշնակցութիւնը հայ-Թիւրքական պատերազմի օրերին: Միթէ Խորհրդային Արաստանն ու Աղբիւրըն էլ դաշոյնը դրած նրանց կոկորդին սպառնում են բար ու բանդ անել Հայաստանը, եթէ նրանք հրաժարուեն Արարաղից, Արարաղից և հայկական միւս

հրգամաներից, Կարծում ենք, որ ոչ, Իսկ եթէ մենք սխալուած ենք տարբերութիւն դնելով իմպիւրիալիտական ծառնաատանի և Խորհրդային Վուսասանի ու Արբեշչանի միջև՝ էլ ի՛նչ արժէք ունին միջազգային եղբայրութեան և համերաշխութեան այն հուսալուծողութիւնները, որ մենք լուծ ենք հայ բաշխիկներէրէր և նրոնց ջանադաշնութիւն ամէն անգամ, երբ խօսք է լինու։ Հայաստանի և հարեւան երկրներէր այսօրուայ փոխարարութեանց մտտին...

Աստղներ կան, թէ հայ բաշխիկներէր անտարբեր կամ կրաւորական վերաբերմունքը դէպի մեր երկրէր յօշոտունք բացատրուած է նրոնով, որ այսօրուայ Հայաստանը գտնուած է խորհրդային երկրներէր միութեան մէջ։ Փանի որ այդ բաշխիկ երկրներուն էլ իշխուն է նոնց բէթմը, քանի որ նրանք բոլորն էլ հաւասարապէս ապահովուած են իւրաքանչիւր գաւառի տնտեսական բարգաւաճումը և իւրաքանչիւր ազգի մշակութային զարգացումը, ի՛նչ կրաւորութիւն ունի բաշխիկի համար, թէ այս կամ այն գաւառը, այս կամ այն ազգային հասուածը խորհրդային երկրներէր որի՛ մէջ են գտնուում։

Մենք պտորատ ենք հաշուելու և՛ այս բացատրութեան ճիշտ. պատրաստ ենք հաշուելու, որպէսզի տեղիք չմնայ հայրենիքը վաճառողի խաբանը դնել Հայաստանի որ և է կառավարութեան, անգամ մեզ մահացու թշնամի կառավարութեան ճակատին Բոյց նորից հարց է առաջանում. Հապա ինչու՞ Հարեւան երկրներէր բաշխիկներն էլ այդպէս չեն մտածում։ Ինչու՞ Արբեշչանի բաշխիկները մեր երկրի խորհրդայնացման առաջին օրերին հանդիսուող կերպով լայտարարելուց յետոյ, թէ իրենց Ծարուր-Նախիջևանն ու Ղարաբաղը Հայաստանի մասն են համարուած՝ մի քանի ամիս անց, դիմելով իրենց խօսքը, փոխիցին այդ գաւառներին ճանապարհը Հայաստանի կոմիսարներին առաջ։ Կոմիսարն վրացի բաշխիկները, որ Անդրկովկասեան Գործադիր Կոմիտէի վերջին նոտաշրջանի օրերին, Երեւանում, Աղբը-սանդրապարտում և ամէն տեղ, ուր առիթ էր ներկայանում, այնքան բարեկամական, այնքան որոտացաւ խօսքեր էին շուսլում մեր երկրի ու ժողովրդի հասցեին, մաքներով իսկ չեն անցնում հրաժարել Արաւրապից կամ հայկական Մաշխրից վերջապէս՝ ինչի՞ցն է որ նայն վրացի բաշխիկները հակառակ Աջարիայի բացայայտ կանքին՝ անջատուելու Վրաստանից և պիտականօրէն ինքնորոշուելու՝ ոչ միայն ձեռք չեն քաշում այլ օտարացից երկրից այլ և միջոցներ են խորհուած Հարաւային Օսետիան էլ միացնելու Վրաստանին...

Պարզ է, որ նման բացատրութիւններով անկարելի է քօրարկել իրականութեան այլանպակութիւնը։ Իսկ այլանպակութիւնն այն է, որ հայ բաշխիկները համակերպուած են վրացի և աղբեշչանցի ընկերներէր բոլոր պահանջներին որքան էլ նրանք անարգար և կործանարար լինեն մեր երկրի համար, և համակերպուած են այնպիսի հաճոյակաւարութեամբ, որից անգամ պոլսական Հին ամիրանները կկարճեին...

Ի՛նչ է արդեւորք այս ստրկամիտ համակերպութեանը։ Բաշխիկներն ու իրենց արբանեակները շարունակ այն են շեշտում, թէ դրա շնորհիւ խաղաղութիւն է հաստատուել Հայաստանում և նրա շուրջը։ Կործէք խաղաղութիւնը այս

օրուայ Հայաստանում և Անդրկովկասում մի հարազակու, երկրէրց կաթած բարիք լինի, որ կորող էր հայ ժողովրդին բաժին ընկնել միմիայն շնորհիւ բարշեւիզի մ և բաշխիկներէր. կարծէք այդ երկրներուն մարդիկ խաղաղութեան երես չեն տեսել հէնց թիկուց երիցա նորովի քորգի մ և նրա ստորապնների օրով... Եթէ հայ ժողովրդի իղբալը այդ խաղաղութիւնը լինէր — մի խաղաղութիւն, որ երեւոյթական լինելով հանդերձ, դահպանուած է Հայաստանի յօշոտման գնով — նա երբէք էլ կորիք չէր գրայ ո՛չ ազգային վերածնունդի ճանապարհը թեւակոխելու և ո՛չ էլ այնքան քան դժարին ազատագրական պայքարներէր ձեռնարկելու։ Խաղաղութիւնը ինչնանպատակ մի դրութիւն չէ հանդիսանում ընկերային և քաղաքական հարցերում։ Եթէ նա այդպիսին լինէր՝ արդարացում չէին կորող ունենալ տիրող խաղաղութիւնը վրզովոյ այն գտնակաւորային պայքարները, որոնք իրաւաբ հրահրում են ժամանակակից ընկերավարութեան կողմից։ Մարդութիւնը բացարձակ բարիք է գտնում այն ժամանակ միայն, երբ Հիմնուած է արդարութեան վրայ։ Քանի որ այդ որդարութիւնը չկայ, բանի որ Հայաստանում և Անդրկովկասում ներկայումս տիրող երեւոյթական խաղաղութիւնը հիմնուած է հայ ժողովրդի բռնադատման, նրա սրբազան իրաւունքներէր օտոնահարման վրայ՝ հայ բաշխիկները նրանով պարճեալու շատ քիչ տեղիք ունեն...

— Լաւ, դուք ի՛նչ էք ցանկանում, հարցնում են մեզ մանկանում էք որ այն անարգարութիւնը սրբազրելու համար եորից արիւն հոսի Հայաստանում։ Մանկանում էք, որ Անդրկովկասում ժողովուրդները եորից իրար անցնեն, որպէսզի մի Ղարաբաղ կամ մի Արաւրապ կցեն Հայաստանին։ — Սճեւեւիկն և ո՛չ մի դէպքում — պատասխանում ենք մենք վճռականօրէն։ Միայն քաղաքական տկարամտութիւնը կարող է մեզ նման ցանկութիւններ վերազրել։ Հայ ժողովրդի իրաւունքները վերականգնելու խաղաղ միջոցներ ու ճանապարհներ շատ կան մանաւանդ այսօրուայ պայմաններում։ Այսօր Հայաստանում և հարեւան երկրներում միւլեւոյն կուսակցութիւնն է իշխում։ Այսօր այդ երկրները, իբրև դերագոյն արբիւր, միջնորդ. ունին Ռուսագանքը, որ միւլեւոյն կուսակցութեան տիրապետութեան տակ է գտնուած։ Սճեն տեղ իշխող այդ կուսակցութիւնը ազգերի ինքնորոշման իրաւունքը ճանաչել և մոցրել է, իբրև պարտադիր օրէնք. պետական սահմանադրութեան մէջ։ Հասնաձայն այս սահմանադրութեան նախկին առական կայսրութեան մէջ ինքնորոշել են, աւել կամ պակաս պետական իրաւունքներով, մի շարք ազգեր։ Սրանք հանգամանքներ են, որ բազմաթիւ Հարակցութեան տիրապետութեան տակ է ընճնուել հայ ժողովրդի պահանջները խաղաղ ճանապարհով բաւարարելու, եթէ միայն մեր երկրի ճակատագրին իրենց ձեռքն առած հայ բաշխիկները կամք և վճռականութիւն ունենան սեղանի վրայ դնելու այդ պահանջները։ Բայց նրանք այս չեն անում. և օջ միայն չեն անում, այլ և թուլամորթութեան հարկադրում են հայ ժողովրդին անտես աւանել, մտաւայ իր իրաւագրութիւնը, որպէսզի իրենք մի կողմից՝ ոչ և այլ դիտադատանքներից զերծ թան և միւլ կողմից՝ կոմունիստական կրկեսում իբրև «ազգային նախապաշարուածներից» զերծ իսկական միջազգայնականներ հանդէս գան...

Ահա որս ճապին և խոքը և ոչ թէ նոր արխնեղու-
 թիւններ կան պատերազմների ճասին... Անց այսպիսի ցան-
 կութիւններ կամ որոճագործութիւններ վերադարձելու նշանա-
 կում է լուեղանի խտտովանել, որ այսուայս խորհրդային
 կարգերում էլ յարաւանում է այն դրութիւնը, որ հենց որ
 հայը իր արգար պահանջներից խօսի՝ վրացին, սղրբեջան-
 ցին և ուսուր իսկոյն պետք է դէն շարտին իրենց սուսերից
 կոճակիստական ծիրանին և հրացանի ու գաշտը ձեռք
 առնեն ընթ իրօք այսպէս է դրութիւնը՝ պարզ խօսեցէք,
 որպէսզի ամենքը հասկանան ի՞նչո՞ւնստական միջազգայնա-
 թեան իսկական արժէքը և ըստ այնմ ընտրեն իրենց քա-
 ղաքական օւղին:

Ելալիսով, եթէ մի կողմ թղթնքը Հայաստանի խաղա-
 ղութիւնը, որ իր ետեւեանք ոչնչով չէ տարբերում ցարդիմի
 ժամանակ եղած վիճակից և յանձնանի դէպք երբէք չի կա-
 որդ ցուցադրուել իբրև հայ բոլշեւիկների քաղաքական հա-
 մակերպութեան արդիւնք՝ մենք այս համակերպութիւնից
 որ և է զրական արդիւնք չենք գտնի, որով կարելի լիներ
 արդարացին կրա պատճառած սորորացումը: Իսկ բացասա-
 կան արդիւնք — ինչքան կուզէք:

Մանցից մեկն այն է, որ խորհրդային կենտրոնական
 իշխանութեան աջքում հայութիւնն ու Հայաստանը ըստ
 ամենայնի «արևամարտի» քանակութիւն են դարձել, մինչ-
 դեռ Վրաստանը և մինչև անգամ Սղրբեջանը նրա առանձին
 դուրդարանքի առարկան են կարճուած: Այս արհամարհանքի
 արտայայտութիւնը պէտք է համարել վերջուք այն, որ Ձիւն-
 վիւր մի անօրինակ լրբութեանք հեղուծ է հայերին՝ հո-
 մունիստական Ինտերնասիոնալի համադրմարում անելով,
 թէ բոլշեւիկները լուծել են հայկական խնդիրը... ամբողջ
 Տաճկահայաստանը և Ռուսաստանի մի ծառը շնորհելով
 հայ ժողովրդի դահճեղներին՝ Գրա մի ուրիշ արտայայտու-
 թիւնը պէտք է համարել այն, որ Ռուսաստանը Ձիւներին
 բերնով Լօգանում յայտարարեց, թէ խորհրդային երկրները
 պատրաստ են 300,000 հայ դաղթական ընդունելու՝ որ-
 պէսզի հայկական Քատի «թաղանթը» դիւրանայ. իսկ մի
 քանի անիս անց, կրք «թաղանթ» արարողութիւնն արդէն
 կատարած էր, զանազան պատրակներով ի չիք դարձրեց
 իր յանձնաւարութիւնը: Վերջապէս այս արհամարհանքի ար-
 տայայտութիւնը պէտք է համարել և այն յամառ լուս-
 թիւնը, որ կենտրոնական իշխանութեան պաշտօնական մա-
 մուլը պահպանում է Թիւրքիայի սահմաններում մնացած
 հայութեան հայաճանքների խնդրում: Այդ մասուլը, որ այն-
 քա՞ն խնամքով որճազանք է տալիս ամէն մի երկրում տե-
 ղի ունեցող ներքին անկարգութիւններին ու անարարա-
 թիւններին՝ մի հատիկ գառապարտութեան խօսք չըդուս
 ուղղելու համար Թիւրքիայի հասցեին ո՛չ Իզմիրի շարդի,
 ո՛չ վերջին տարագրութիւնների և ոչ էլ ներկայումս Պոլ-
 սում և այլուրեք կատարուող հրապարակային այան-թայանի
 առթիւ: Մինչդեռ եթէ հայութիւնն իբրև դաշնակից ժողո-
 վուրդ որ և է, թէկուզ չնչին համարում ունենաք այդ մա-
 մուլը աջքում, նա այս խնդիրներում անուանի նոյն դիրքը
 կրունք: Ինչ որ բունում է հենց անէք Թիւրքիայի մա-
 մուլը ամէն անգամ, երբ որ և է խորհրդային երկրում տե-
 ղական թիւրքերի դէմ ուղղւած մի քայլ է արձանագարւում...

Սակայն նայատանն ու հայութիւնը արհամարհելի
 քանակ են դարձել այսօր ոչ միայն Մոսկովում և Պե-
 տերբուրգում, այլ և Անդրկովկասեան Ֆետերացիայի մէջ:
 Մենք գիտենք, անշուշտ, որ այդ ֆետերացիայի հաստա-
 տութիւններում բաւական թւով հայ բոլշեւիկներ են պաշ-
 տօնավարում, որի համար էլ նրանք ներկայ վիճակից ղլբա
 գոչ լինելու տեղիք չունին: Բայց մեզ շահագրգռողը, բնա-
 կանաբար, նրանց պաշտօններն ու չաղ առճիկները չեն, այլ
 այն քաղաքական աղբեջութիւնը և տնտեսական շահերը,
 որ բաժին են ընկնում Հայաստանին Անդրկովկասեան նա-
 ղապետութիւնների Միութեան մէջ: Երկուսն էլ չընչին են
 հայ ժողովրդի քանակի և որակի համեմատութեամբ: Քա-
 ղաքական խնդիրներում, այսօր փաստօրէն Օրծոնիկիճէների
 և Օրիխաշէլիկների միահեծան կամքն է իշխում, Անդր-
 կովկասում, իսկ անտեսական խնդիրներում Հայաստանի պա-
 հանջները նւազողոյն չափով են միայն նկատարուեանք ար-
 ժանեւում: Ինչ դէպի յետին գծերը ծերու համար վրացիք
 և աղբեջանցիք ունին, ի հարկէ, Շշտո հասկանալի՝ բա-
 ցատրութիւններ — Քաղաքական աղբեջութիւնները և Նիւ-
 թական բարիքները բաշխւած են համեմատական չափով:
 Արդ, քանի որ Հայաստանը տարածութեամբ և բնակչութեան
 թւով վերջին տեղն է բունում Անդրկովկասեան ֆետերաց-
 իայի մէջ, բնականաբար պէտք է ջքով դահանալուստայսպէս
 են տրանսբանում նրանք: Այս արամբանութեանը հակադ-
 դելու համար հարկաւոր էր յայտնուեթիւն ունենալ վրացի
 և աղբեջանցիք ընկերների երեսին զարկելու մեր երկրի և
 ժողովրդի արհեստական փոքրացման պատճառները, հարկաւ-
 ար էր համարձակութիւն ունենալ պահանջելու, որ բաշխ-
 ման համեմատութիւնները որոշելիս հաշվի առնուի ոչ միայն
 երկրի տարածութիւնը, այլ և նրա շէնութեան առաճանքը,
 ոչ միայն ժողովրդի քանակը, այլ և նրա բարեկեցութեան
 չափը: Բայց հայ բոլշեւիկներին ո՞վ է տւել այսպիսի յան-
 դիմութիւն և համարձակութիւն նրանք «քթը» են միայն ի-
 իրենց քաղաքական հակառակորդների հանդէպ և այն էլ
 պայմանով, որ դրանց ձեռքերն ու օտքերը շղթայած
 լինեն...

Վերջացնելու համար ասենք, որ հայ բոլշեւիկների
 համակերպութեան բացասական աղբեջութիւնն զգացում է
 նոյն իսկ Հայաստանի ներքին որոհեղում, երբ այդ գործերն
 այս կամ այն կերպ աւելւում են հարեան պետութիւն-
 ների հետ:— Յարկներից ի վեր ճիշտանջի պէս ծանրացած
 է հայ ժողովրդի կրճէին ներգալթի խնդիրը: Այդ խնդիրը
 դէթ մասամբ լուծելու համար առաջարկւում է հայ գաղթու-
 կաններին յատկացնել Թիւրքերի լքած դիւղերը: Հայ բոլշե-
 վիկները յամառ կերպով յետ են մղում այդ առաջարկը,
 որովհետեւ... Ի՛նչ կասն Աղբեջանի ընկերները, Հայքար ա
 մի դժարութիւններով Հայաստան փոխապրած Ռուսաստանի
 դաղթականներին տեղափոխել են Իրաւաւոր դիւղեր և անարկան-
 բում, աք նրանք տառապում են ամէն տեսակ կլիմայական
 անյարմարութիւններից, ջրի պակասից ևն: Կառավարութիւնը
 որոշում է նրանց փոխապրել Արաքսայանի ճահճատները,
 ուր նրանց մի նոր պատուհաս է սպասւում — Թերմալստ
 Քաղթականները խնդրում, պաղատում են կառավարութեանը՝
 իրենց յատկացնել Նիրակ գառախ Ամասիայ դիւղը, որ ներ-

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԴԱՇԵՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ

կալուն անմարդաբնակ է թիւրք բնակիչների հեռանալու պատճառով Պատասխանը — կորական մերժում. որովհետեւ... Ի՞նչ կասեն Արբեշյանի ընկերները, Այսբան (Նըբանկատ) են հայ բոլշեակիները արբեշյանցիները հանդէպ այն արբեշյանցիներին որոնք ամենայն յաճառութեամբ արգելք են հանդիսանում նուխաւայն և Արեշի հայ գաղթականներին վերադառանք իրենց աւերակ գիւղերը, որտեղից նրանք մի քանի տարի առաջ վտարել էին սրով ու հրով...

Այս ստորաբաժը Համակերպութիւնը ներքին կեանքում ուրիշ պտուղներ էլ է տալիս, որոնցից մեկը ներկայացնում է մեզ Երեւանից ստացած վերջին թիփակցութիւնը:— Ծառ. կատարել իր դաւադրական ցանցերը Ծարուք-նովիջեանից տարածում է դէպի Չափերատար, Երեւան, է միւս թրքաբնակ վայրերը: Հայաստանի Չեկային տեղեկագրում են թիւրքերի հակապետական մտարբութիւնների մասին, բայց նա երկար ժամանակ չի վստահանում ձեռք տալ դաւադրութիւններին Երբ աչք գոցելն այլևս վստահաբար է դառնում Չեկան վերջապէս համարձակութիւն է գրում իր մէջ ձերբակալելու մի քանի օտանեակ թիւրք: Բայց որպէսզի այս բայցը անախտօք սպաւորութիւն չգնի Արբեշյանի վրայ՝ նա միտածանակ քանակ է դնում մի քանի անգամ աւելի թւով Հայերի ևս նրա համար Ի՞նչ արժէք ունի հայ քաղաքացիների անդորրութիւնը և մինչև անգամ կեանքը, երբ Արբեշյանի ընկերներին սիրաշահելու հարց կայ մէջտեղը...

Կարծում ենք աւելորդ է փաստելի այս շարքը երկարացնելու Պատահական ձեռով ընտրած այս նեղուշներն էլ բաւական են լուսաբանելու, թէ Ի՞նչ բնոյթ ունի և Ի՞նչ արդիւնքներ է տալիս հայ բոլշեակիների համակերպող քաղաքականութիւնը:

Մեր ստացած տեղեկութիւններով հայ ժողովուրդը, որ մի քանի տարի առաջ այնքան մեծ յոյսեր էր կապել հայ բոլշեակիների տիրապետութեան հետ, այժմ եկել է այն գիտակցութեան, որ այլևս անկարելի է իր կենսական շահերի պաշտպանութիւնը ձգել այդ բախտախնդիրներին: Եթէ այս այսպէս է, ապա պէտք է աւել գիտակցութիւնից անհրաժեշտ երակայնութիւնը ևս հայրենի երկրի պայմաններում եզրակացութիւն այն կարող է միայն լինել որ ժողովուրդը սեփական ուժերով պէտք է վարի իր գաղտը: Մեծ չէն այդ ուժերն անկողական, բայց յաճախ փոքրիկ ուժերն էլ խոշոր արդիւնք են տալիս, երբ գործադրում են խնայողաբար, խոհանր., շրջափախաց, բայց և վճռական յաճառութեամբ և սովորութեամբ:

Թորհրդային իշխանութեան բոլոր ինտանցիաներից ժողովուրդը պիտի պահանջի իր իրաւունքը: Անձն տեղ ուր հնարաւոր է և ինչ ձեւով որ հնարաւոր է, նա պիտի իր ձայնը բարձրացնի, որ Հայաստանին տրեւն անջատում է բուսաբարուած հայկական հողամասերը, որպէսզի հայութիւնը Անդրկովկասեան ժողովրդների ընտանիքում կարողանայ հանդէս գալ իբրև հաւասար անդամ և ըստ այնմ նկատի առնել Անդրկովկասի բոլոր գործերում: Եւ այդ ձայնը պէտք է հնչէ այնքան բարձր և այնքան ազրու ձեւով, որ և թրֆիլատու և՛ Մակակալում գզան, որ հայ ժողովրդի պահանջների արժէքը երբեք չի կարելի չափել հայ բոլշեակիներին սիրալիք ժպտաներով...

Քանի որ հայ ժողովուրդը չի կարող իր արդար իրաւունքներին տիրանալ օրւայ իշխանաւորների միջոցով՝ նա պէտք է տիրանայ այդ իրաւունքներին նրանց գլխի վրայով...

Ա. ՋԱՄԱԼԵԱՆ

Անդրկովկասի մէջ կային երեք անկողի հանրապետութիւններ, որոնք խորհրդային կարգիւր հաստատուելէ յետոյ ալ, կարճ ժամանակով մնացին անկախ, բայց շուտով, 1921ի Մարտ 12-ին այդ անկախ հանրապետութիւնները իրենց սիրազոյն իրաւունքներէն հրաժարելով կազմեցին, Անդրկովկասեան Դաշնակցութիւնը:

Այս վարչական-քաղաքական փոփոխութեան աւելի ոյժ կուտային Ռուսաստանը և Անդրկովկասեան բոլշեակիներէն Հայերը միայն, Միասնիկովի գլխաւորութեամբ (Լեւոն Էլ-Սեան ներկայ Անդրկովկասեան Դաշնակցութիւնը արդիւնք չէ Անդրկովկասի բոլոր ժողովուրդներու, գոնէ Վրացիներու, Քաթարներու և Հայերու փոխադրած համաձայնութեան, կամ ընդհանուր անտեսական, քաղաքական պահանջին, այլ արդիւնք կրեմլի կամքին և մասամբ հայ բոլշեակիներու յանկութեամբ: Մասնաւոր Արցախիները, իրենց գլուխն ունենալով բոլշեակի վարչապետ Մուսկոյի, գէճ էին Վրաստանի ճակատագիրը կապել Հայաստանի հետ և կ'ազգէին անկախ սովետական միութիւն մնալ: Այսպիսի բոլշեակիներ խեթ աչքով դիտուեցան Մուսկոյի կողմէ և թշուառացան. սուպարեզը մնաց անոնց որոնք համաձայն են ներկայ վիճակին:

Ձեռք ուզեր ըսել թէ դաշնակցութեան (Ֆեդերացիա) կամ համադաշնակցութեան (կոնֆեդերացիա) ձեւեր հիմքեր, պայմաններ չկան Անդրկովկասի, գէճ: Տեսանկարէն պէտք է ընդունիլ որ ժողովուրդներու ներդաշնակ կենսակցութիւնը աւելի նպաստաւոր է դաշնակցելու, և ոչ թէ կզրտացած մնալու: Անդրկովկասի փոքրիկ ժողովուրդները սկար են իրենց բնակավայր մշակութիւնը, իրենց երկիրներու ոչ-քաղաքական շարտարութեան պատճառով, ինչպէս և բազմաթիւ քնիկ ցեղերու, ժողովուրդների և կրօնքերու տարբերութեան հետեւանքով: և որպէսզի կարելի ըլլայ շօշափելի ոյժ մը, ամբողջական անտեսութիւն մը և փոխադրած շահերու պաշտպանութիւնը սպահովել, դաշնակցային սկզբունքը լուսազոյն ձեւն է:

Արդ, ինչո՞ւ Վրաստանը ընդհանրապէս (մէջն ըլլալով և բոլշեակի Մոսկուսիները) չեն սպարուած Բեդերացիա՞ով: Ինչո՞ւ Արբեշյանը լուռ, սպասողական վիճակի մէջ է: Ինչո՞ւ ներկայ վիճակը կը գոհացնէ ինչո՞նք Մուսկուան: Եւ ինչո՞ւ, վերջապէս, որդո՞հ է նուև Հայաստանը, որ դաստիարակուած է, շնորհիւ Դաշնակցութեան, ֆեդերացիայի գաղափարներով: Բոլոր հոսանքները, մէջն առնելով և Ֆետուրայիս Դաշնակցութիւնը և քուցէ հայ բոլշեակիներու խոշոր մեկ մասը, Անդրկովկասեան ֆեդերացիան կը նկատան ծագարնք, կորստաբեյ՛ հայ ժողովրդի և Անդրկովկասի ամբողջութեան շահերուն:)

Ենդրը այն է, որ այսօրայ Անդրկովկասի ֆեդերացիան խեժով իրարու փակցուած անջատ մարմիններու կը հմանի, և ոչ թէ առողջ և բնական շահերու սերտ կապակցութիւն մը: Ներկայ վիճակը անկալուն, ժամանակաւոր հանգրուան մը պէտք է համարել որ կ'աճ նորէն բաժանեալութեան պիտի ըլլայ, ինչպէս 1917ին, և կ'ամ պիտի առաջնոր-

դե գեպի իսկական և բնական ֆեդերացիան: Այսօրայ ֆեդերացիան քաղաքականութիւն ճնն է, երևույթները փրկելու և ժողովուրդներէ ազատութիւնը խնդրելու, մէջքը մը՝ միայն սուրական հողերը վարդերէ հաւաքելու: Այսօրականը չէ այն ֆեդերացիան ուր ժողովուրդները իրենց կամքն ունին, ուր անկախութիւն կը վայելեն իրենց բախտը անօրինելու, ուր ազգերը կը գտնեն հոգեկան, ֆիզիքական և այլ պահանջներու լիակատար գոհացումը, ուր չկայ տիրոջ և տիրապետելու, այլ անկտի ու ազատ ժողովուրդներ, որոնք թէև տարբեր ծագումով և դաւանանքով, իբրևո հետ կը կապուին, կը զաշնակցին ընդհանուր շահերու բնորոշով: Ներկայ ֆեդերացիան այդ պահանջներուն կը համապատասխանէ ձեռով միայն, իսկ հոռիօքով՝ երբեք: Այդ է հիմնական պատճառը անոր անժողովրդականութեան:

Այդ անժողովրդականութեան պտտմանը կէտ արջիւնն է Մոսկուայի և Անդրկովկասի յարաբերութիւնը: Ըստ ձեռի է խօսքի, ըստ նշանաբաններու և յայտարարութեանց, Անդրկովկասը անկախ միութեան ճնն է ընդհանուր Ռուսաստանի միութեան մէջ. բայց երբ զեղեցիկ խօսքերը մէկդի դնենք և խնդիրը բնիկնք առարկայօրէն, պիտի տեսնենք որ Մոսկուայի թէև քաղաքացիական և տուած Անդրկովկասին քան քարական Պետերբուրգը, բայց այլ իրաւունքները այնքան փոքր են, որ չեն համարատեսակներ անդրկովկասեան արժեքն ու ժողովուրդներու ազգային անկէտուն: Երէկ այդ ժողովուրդները մտազնային բացարձակ անկախութեան քաղաքացիները, անոնք քանի որ տարի եղան անջատ և ազատ հանրապետութիւններ, որ և է կատարէ չունենալով Ռուսաստանէն. թշնամի եղան կարծիք թէ սպիտակ Ռուսաստանը ներուհի և պատերազմով ինկան իրենց զերխշահութիւնէն. այդ ժողովուրդները. — Վաստան, Հայաստան, և. նոյն իսկ Արցախը, ըստ չէն կրնար գոհանալ ազատութեան այն փշրանքներով զորս չկարող է աշխարհակալ Ռուսաստանը: Ըստ հոռիօքովի էն է տուած Մոսկուայի Անդրկովկասին երկու զան միայն, — վարչական և ճշակութային սպակեղանացում՝ այսինքն երբ «կենֆեդերացիան», «ֆեդերացիան» մեծազորող խօսքերին փոխարէն գործածելը քարական Ռուսաստանի գեմտովանական իրաւունքներ, սխալած չարտի ըլլալը ըստ եւութեան: Մէկ տարբերութիւն կայ միայն, որ մինչ ժողովութեանը շնորհակալ գեմտուայի իրաւունքներէն առաջ կարելի էր օրէնքիլի սահմաններուն մէջ լայնօրէն օգտուել, այժմ ըստ ընթացման հոգեկան ֆեդերացիայի ժյուր իրաւունքներէն անհնար է օգտուել օրէնքներու թուրտութեանը: Այս կտորը հնարովի չէ, այլ կը բնի բոլոր լիկներու կառավարութեան մէջտալէն: Կկրնուածիք ուզուածութեան կողմնակից բոլորէիք ընկերակազմները ըստ հոռիօքովի գեմ են ազգային ինքնորոշման և զայն կը համարեն հակալիզափոխական միայն, զասակարգային գիտակցութիւնը մթազնու ազգակ ճնն համաշխարհային յեղափոխութեան առումները միայն բանուր գառակարգը համարելով, անկախ իր դաւանանքէն և ճեղքէն, բանուր ազգային պատնէշները կը նկատեն իւրընդոտներ, անտարակալ գերակայութեան: Մասկայն, իրական կեանքը հաստատեց որ ժամանակակից բանուրն իսկ ազգային հարցը, իր հայրենիքի ազատութիւնը և այլն աւելի կը գնահատէ, քան իր ձգտակարգային ճանա-

ւոր շահերը: Միւս կողմէ, Ռուսաստանը կտոր կտոր էր եղած հին և նոր ազգերու միջև և նոյն իսկ Անդրկովկասի մէջ անջատուած էր իբրև պետութիւններ: Բոլշեւիկները ձգտելով գտնելու այս հիմքերը համաշխարհային կայսրութեան, ինչպէս Արեւմտեան Մակեդոնացիները կամ Մեծն Պետրոսները, իբրև իշխանութիւն մէկ ձևուրով կը շարձուին ազգերու ինքնորոշում և ապակեղանացում, իսկ միւս ձևուրով իբրև բոլշեւիկ կուսակցութիւն, ետ կ'օտնէին, կը կեդրոնացնէին երևութաւած տուած իրաւունքները: Անկի պարզ խօսքնք: Առնենք Անդրկովկասը իբր օրինակ:

Անդրկովկասի մէջ կարծում էին երբք անկախ հանրապետութիւններ. կային և կան երբք զլիւսուր ժողովուրդներ ազգայնօրէն կազմակերպուած, իրենց յատուկ յեղուհ բով. գաւանանքներով, սովորայինորով մարիքը ժամանակին գրաւած էին այդ երկիրները. բոլշեւիկները չեն ուզեր ցարերու աշխարհակալութեան հետ մտալ, ճանաւանդ որ իրենց ձգտութիւնով կ'երթան աւելի մեծ Ռուսաստանը, թող չըլլայ Ռուսաստան անունով, թող կոչուի «խորհրդային»: Յարերը իրենց հարաբերութիւն հասնելու կապով միջոց մը ունէին, — առաջ թշն կ'անկախներ և նուաճուած երկիրները յայտարարել սուրբ Ռուսիայի անբաժան իսպառ Անդրկ իրենց ձեռքին սակ ունէին բազմաձեռնիտն սովորներ, հլու և հնազանդ, իսկ իրենց աշխարհակալութեան գրոշին վրայ կ'ըլլու. «անկեղծ», «կողերային», «ճանուչկա Ռուսիայ» Պայմանները փոխուած էին. յարգները քայքայուած Ռուսիան վերականգնելու, արշաւը շարունակելու, «Ռուսական» հողերը հաւաքելու համար, մէկդի դրին հին գրոշակը և գրեցին. «առանց գրաւման, առանց Ռուսաստանի» Յետոյ՝ «ազգերու ինքնորոշում, լիակատար ազատութիւն, բոլորը ազատ են»:

Միայն իբր երաշխիք՝ «սովորներու ճանաչում»: Ո՞վ պիտի հրահանք հեղեկական ճկունութեանը գրուած այս նշանաբանը բերու ըսն ինասպ... Շատ բիշերը, ե՞րբ պիտի հրահանային ժողովուրդները այդ խօսքերուն իսկական միտքը, — շատ աշխարհակալները ձեռնակն նստած ըլլար իրենց կրքերն:

Երգարև, բոլշեւիկները այդ խարդախ նշանաբաններով նոյնքան նուաճողական ուժ ստեղծեցին, որքան ցարերը կարգիներու երկխոսքներու սնրակներով և ուսկ ժողովներու սովորներով, և այս նոր միջոցներով բոլշեւիկները շարունակեցին ցարերու գործը և վերաշատարակելին օւսուական տիրապետութիւնը Անդրկովկասի մէջ: Դժուարը թույլ ուժերով և հնազանքանք մանկներ. անոնք հարած էին իրենց նպատակին արանց որ և է բան վերջու և գոհլու: Որովհետև ի՞նչ կը նշանակէ խորհրդային կարգերու ճանաչման պայմանը, — կը նշանակէ ընդունիլ կուսակցական դիկտատուրան, ընդունիլ թէ կուսակցութիւնը պիտի ղեկավարուի մէկ կեղծութիւն, թէ ո՞վ որ չեն թարկուիլ նոյն այդ կիրանին՝ հակաբողոք փոխական, իրաւազուրկ արարած մըն է, թէ Կրեմլի ճանօր շարժումով պիտի հասնէ և կանգնի: Երբ այս են խորհրդային կուսակցութեան պայմանները, ի՞նչ պիտի մնար սո նշանաբաններէն — ազգերու ինքնորոշում, ազատութիւն, անկախութիւն ևն: Այսպէս օրինակ կրթական գործը ազատ և բոլշեւիկները Քէճայի նման չեն ըսեր թէ Ռուսներէն պիտի խօսք կամ կարգը. բայց իր պարտադրեն Կրեմլի մշակած Ռուսական մարտն ու գասպիլքերը. կ'ըսեն

թէ այդպէս կը պահանջէ «Հաստատութեան» միօրինակութեան սկզբունքը, բայց ա՛յդ է ժողովուրդներու ճշակոյթի ինքնավարութիւնը: Վարչական ապակեղանացունքն ընդ առաջ կ'երթան. ոչ Քէմալի, ոչ ալ ցարերու նման չեն պահանջեր որ պահածութիւնը ծաղուծով թուրք կամ ուսուցիչ, այլ մեթոդը Հինցած է. Ընդհանրապէս, Հայեր կրնան ըլլալ Հայաստանի, Վրացիներ՝ Վրաստանի մէջ, բայց մէկ պայմանով՝ որ այդ վարչական մեքենան կազմուի ոչ թէ անդակն ժողովուրդի կամքով, այլ միայն բոլշեակի կուսակցութեան անդամներէն, որոնց պարտքն է խաճաճիկ պէս շարժումներ կատարել, Հոսանքայն Գրեմլին քննադատելով Մէկրի կը ձգձգ կրօնական, տնտեսական, ընկերային, գիւտարական, արտաքին և ներքին յարաբերութիւնը, թղթատարի և այլ խնդիրները, որոնք բարձրակարգին կ'սխալու մտնին բոլշեակի իշխանութիւնէն, կ'օճուխտական կուսակցութիւնէն: Ա՛յս թէ ինչո՞ւ Անդրկովկասը ամբողջութեամբ մզուց է իր կապակցութիւնէն Ռուսաստանի Հետ Ձիւքը չեն զոհարարներ այն իրաւունքները որ իւր շնորհ տրուած են Մոսկուայէն:

* *

Գործի չէ բաւ թէ Անդրկովկասը կազմող ազգերը բարձր մէկ տեսակ պատճառներէ թելադրուած թեր կամ դե՛մ են ֆեդերացիային: Անոնց իւրաքանչիւրը իր առանձին գիտատեսներով, լաճախ իրարու Հակասող ձգտումներով դե՛մ է ներկայ կարգերուն:

Առանց Արբէշյանը: Այդ երկիրը Անդրկովկասի ամէնէն յետաձեռն ծառ է. անոր քնակիչներուն մեծ ճասը կը բաղկանայ Քաթարներէ, որոնք դու ես կը խարխափին կրօնական Համայնքի և ազգութեան միջև. Եւջերը կը Հաղկուան թէ իրենք թաթար են և ոչ թէ «Իրան», զոր կը շփոթեն սողալին Հակակցութեան Հետ. ժողովուրդին մէկ փոքր ճասը միայն, 5-6% կարբուլ-դիւր գիտէ մեծ ճասը դեռ թաթարական խոշորամեծ է, իսկ միւս ճասը նահապետական գիւրացի:

Ցորական շրջանին այդ տարրը . կը ներկայացներ անգիտակից Հօտ մը, որ անոր յետարան էր առական իշխանութեան Անդրկովկասի մէջ և ամէնէն Հաստատութիւնը յեղափոխական կամ ազգային շարժումները խափանելու Ցորական Ռուսաստանը զայն կ'ըզտագործէր ազգային գիտակցութեան եկած Հայերը ձեռնուր, ինչպէս Քուրբի մէջ Մուսթանները նոյն բանը կ'ընէին Քիւրտերու միջոցաւ: Քաթար տարրը կը խրախուսուէր իր անգիտակցութեան Համար և աւելի կը պաշտպանուէր իշխանութեան կողմէ, տնտեսական, Հոգային և այլ խնդիրներու մէջ: Տանձաւասանը վերջ տեսաւ Արբէշյանի իսլամութեան այս կրօնարական դիրքին. անոր Համիդովական, յետոյ Համիդարական գազափարներու քարազուկիւնը ցնցեց այդ անկենդան զանգուածը և զայն կամայ-կամայ Հեռացնելով Ռուսաստանէն, ծոտեցուց Քուրբերուն: Ի վերջոյ Քուրբլան իր բանտներով, Խալի և Նուրի փաշաներով ճառաւ Արբէշյան և իսլամ Համայնքէն անդիմաց թուրք-թաթար ազգութիւն և թաթարական Հանրապետութիւն, Արբէշյանն անուրով:

Ներկայ ուղղանկան Արբէշյանը մեծ պարտականութիւն ունի Հանդիպ Քուրբերու, քանի որ անոնց շնորհիւ ստացաւ ազգային զազափարը, անոնց գրականութեամբ ներ-

շնչեցաւ և վերջապէս անոնց միջոցով ազատագրեցաւ Հիւս գաւանակի կաշկանգութիւնէն և իր տեղը գտաւ: Թուրք թաթարական ընտանիքին մէջ, Իսկ իր անկախութիւնը պարտական է ոչ թէ իր զոհարարութեան, այլ տաճիկ զօրքին, որ Գանձակի ու Բագրն տապալելով, թրքական նոր պետութիւն Հաստատեց Կասովի ճովուն սփը: Այսպէս թաթար ժողովուրդը Հոգիով և մարմնով իսպառ բաժնուած էր Ռուսաստանէն և ինկած Տաճիկներու գիրկը: Այս Հոգեկան միացումը այժմ ալ կայ երկու քոյր ժողովուրդներուն միջև և եթէ երկուքը զեւ չէին նոյնացած, բայց խիտ մօտեցած էին, երբ 1920ի բոլշեակի արշաւանքը նորէն բաժնեց Տաճիկն ու Քաթարը:

Բոլշեակիները սովետացնելով Արբէշյանը, Անդրկովկասի մէջ ամէնէն նպատակներ պայմանները ստեղծեցին Քաթարներու Համար: Արբէշյանը եթէ իր վիճակը Համեմատութեան դեմ Անդրկովկասի միւս ժողովուրդներուն Հետ, պիտի գտնէ որ ամէնէն շատ կ'օգտուի թէ ճառարագապէս, թէ տնտեսագապէս, և թէ իբրև երկարամտ և իշխանութիւն Յատուկ ուշադրութեան առարկայ է Արբէշյանը բոլշեակիներու կողմէ, որոնք կը ձգտին զայն զոհ ձգելու, մինչև անգամ անոր քեճահայրները նկատի առնելու: Այդ գիշորութիւնը՝ անոր Համար, որ Արբէշյանը տէր ունի, և թիկունք. այդ տէրն է Քուրբիան զոր սերտաշէիլը քաղաքական պահանջ մըն է բոլշեակիներուն Համար: Արբէշյանի և Էնվիլէր փաշայի նշանաբանները Բագրի տրեւեան ժողովուրդներու Համագործարին մէջ և թրքաբանական վերջին Համագործարները ունին իրենց քաղաքական նպատակները, — ազգի արևելեան ժողովուրդներու վրայ, յետարան ունենալով Արբէշյանի իսլամ և թաթար ժողովուրդը:]

1925-ին Արբէշյանի ստրածութիւնն էր կ'ըր թիւերով 75,000 քառ.վերտ, 2,016,400 ազգաբնակչութեամբ որուն 1,125,150-ը թուրք թաթար (56%), իսկ թրքացի 44%-ը, ճաս մէկ միլիոն՝ ուրիշ ազգեր Մէկ քառ. վերտին կ'էլնայ 26,8 մարդ, այն ինչ իր Հորեւան Վրաստանը բառ նոյն ազգիւրեւեան ունի 2,479,800 քնակիչ, ճաս 60,000 քառ. վերտ տարածութեամբ և իւրաքանչիւր վերտին 40 մարդ Վրացիները կը կազմեն ազգաբնակչութեան 68,1% ըր իսկ Հայաստանը ստանց Սեանայ լճին ունի 25,300 քառ. վերտ և 910,000 ազգաբնակչութիւն (մէկ քառ. վերտին վրայ 36 մարդ) որուն 86%-ը Հայ միայն: Այս թիւերէն կը տեսնենք թէ ինչ բարեպատե՛հ վիճակի մէջ է Արբէշյանը, Համեմատելով Վրաստանի և մանուսանց Հայաստանի Հետ: Ազգաբնակչութեամբ վար ըլլալով Վրաստանէն, անկէ մեծ տարածութիւն կը բունէ, իսկ Հայաստանէն երկր անգամ աւելի մեծ: Թէև ազգաբնակչութիւնը երկու անգամն է, բայց խտութիւնը միւս երկու անգամ պակաս բան Վրաստան և Հայաստան, և որ երկուսն է, ընդարձակուած է ոչ թէ Քաթարներու բազմութեան Հետեանցով, այլ ի Հաշիւ տրիշ ազ ու թիւններու, մանուսարագապէս Հայերու, քանի որ Արբէշյանի մէջ թաթար ժողովուրդը 56% է, Վրաստանի մէջ Վրացին 68,1%, իսկ Հայաստանի մէջ Հայը 86%-ը:

Կարելի է մանուսանց տեսնական, դրամական և այլ ապարեզներէ բազմաթիւ Համեմատական թիւեր բերել. ցոյց տալու Համար, որ Արբէշյանը սովետներու կողմէ ամէնէն շատ նպատատարուած, չափէն աւելի շոյուած երկիրն է. եւ

Աստիճակով մեր սասանները ֆաշիզմի մասին կա-
րօշ ենք անել հետեւեալ եզրակացութիւնները.—

Փաշիզմը, ժողովրդագտնական սկզբունքի տե-
սակէտից, անպայման, յետաջրջական երկուք է: Նա
վերցրեց Իտալիայում քաղաքական ամէն ազատու-
թիւն և հաստատեց հոսակցական դիկտատուրա, իր
բարբարոսականութեամբ ու հետևանքներով: Իշխանու-
թեան ղեկն իր ձեռքը ձգելուց յետոյ, նա հրատարեց
Նոյն իսկ այն համետու պահանջներէն, որոնք կազ-
մուծ էին նրա սկզբնական ծրագիրը: Հնկերային օ-
րէնք է ուր չկայ հանրային հակազէիք և իշխանու-
թիւնը գտնուում է անպատասխանատու փոքրամաս-
նութեան ձեռքին, նա անխուսափելիօրէն այրուսե-
րում, վերածում է բանակալութեան և դպնում է յե-
տագիտական գործունէ Այդպէս պատահեց և ֆաշիզմի
հետ, որը սկզբնական շրջանի տատանումներից յե-
տոյ՝ անվերաբարձ նետուց խաւարի դիրքը: 1924-ին
ֆաշիստները վարչապութեամբ սպաննեցին ընկերվա-
րական պատգամաւոր Մատեօտիին: Արտագանութիւնը
անօրինակ յուզում առաջ բերեց ամբողջ երկրում և
դարձաւ մի տեսակ զարմակէտը ֆաշիզմի դարգաց-
ման ճանապարհին՝ ցոյցահանելով նրա ամենատր-
տաւոր կողմերը: Նոյն տարւայ անհնը սկսեց ի ընդ-
դէմադիր կուսակցութեանց պատկանող 140 պատգա-
մաւորների բոլկօտը ֆաշիստական խորհրդարանի
դէմ, որ թէ և վերջացաւ ձևական պարտութեամբ,
քայց, անկասկած, Նոյնպէս ուժգին հարած հասցրեց
ֆաշիզմի վարկին:

Այսպիսի պայմաններում, ի հարկէ, զարգանում է
քմահանքը, բախտախնդրութիւնը, չարաշահու-
թիւնը, շահամոլութիւնն ու կաշտակերութիւնը:
Բարձրաթիւ ֆաշիստներ, որոնք ֆաշիզմի իշխանու-
թեան հասնելուց առաջ, աղքատ ս անշնան մարդիկ
էին, այժմ տէր են միլիոնների և արտակարգ ազդե-
ցութիւն ունեն.— Նոյն երկուքը, որ և խորհրդային
աշխարհում: Դրան նպաստում է և իտալական բուր-
ժուաքիւն, որ, ընդհանուր ստմամբ, գոհ է ֆաշիզմից,
որովհետև սա շոյում է նրա ազգային զգացումները,
հովանաւորում մասնաւոր սեփականութիւնը, սպնձա-
հարում քանտրներին և, մասաւանդ, օգնում հարստա-
նայուք «Մեծ Իտալիա» նշանակում է իտալական ար-
գիւնաբերութեան և անտարի համար լայն շուկաներ,
բուքթուադիան, հարկաւ, Մուսօլինիի հետ է «Մեծ
Իտալիա» յի խնդրում:

Յ. ՎՐԱՑԵԱՆ

ԹՈՒՐ-ԲԻՈՅ ՂՈՒՐՋԸ

- Տարի մը կըսկ ու բոց արձակելէ յետոյ, յան-
կարծ լեզուն քաշեց էնկիւրի: Սպառնալիքներու տեղ,
այժմ բանակցութեան արձագանքներ կը լսուին Մու-
սոլի մասին: Եւ բանակցութիւնները Հասած են այն-
պիսի կէտի մը, որ Թուրքիան ա՛լ ևս չի կրնար գառ-
նար: Աւերջ խաքօզ, Համահիրպած է Մուսոլի կո-
րուստին, և կը ճգնի սուղ արժեցնել իր դիջուժը, ւ-
պահովութեան դաշինք մը, տեսակ մը անգլեթուրք
Լօբարնօ ստորագրելով: Միւս կողմէ, լուրջ լոյսեր,
ունի փոխառութեան մը Համար, որուն կարտը կը
քաշէ տարիներէ ի վեր:

Ի՛նչ խօք որ Մուսոլինիի նայուածքն ու շար-
ժումները մեծ դեր ունին այս աւշադրու փոփոխու-
թեան մէջ: Լակտանի գանադան պաշտօնական Հըր-
բումներու, Թուրքիան մտահոգ է սակ շապիկներու
բունած դիրքէն: «Իէպի Երեւելը» արտասանուցյաւ
անգամ մը, խորապէս ազդելով միտքերուն վրայ: Կինո
սական պահանջներ ունի չարաճուն Իտալիան, զաղ-
թավայր և շահաստան կը փնտռէ լապտերը ձեռքը
և Հրաքանը ուսին: Աշխարհը այնպէս դասաւորուած
է, որ տրամադրելի տեղերն ալ շուտ աչքի կը զար-
նեն: Ա, կը տեսնուին պարզ աչքով, ամենուէս կօզմէս
Այս կացութեան մէջ, Ի՛նչ կ'արժեն դիւմնագիտական
Հաւաստիքները, որոնք մէշտ պիտի շուսլուն իրրև
սովորութիւն: Այս ճշմարտութեան խորապէս գիտակից
է բեմայական Թուրքիան, և կը ստաթաստօրի զայիք
Հարուածին Համար, առանց շատ աղճուկ Հանելուր
Զօրաշարժն անգամ զադտնի կը պահուի, առանց
լրագրական որոշ յայտարարութեան, յատուկ պաշտօն
եաներու միջոցաւ: Թուրքերը իրենք շատ բաւ կը
Հասկնան կացութեան փոփոխութիւնը: Վերջերս ուշա-
գրաւ խոստովանութիւններ կ'ընէր նոր թերթ մը «Ենէի
Մէս»: Ներկայ երեւութական խաղաղութիւնը թպտեւ
բական «միջնաբարի յատուկ պահեր» Համարելով,
թուրք թերթը դիտել կուտար:

— «Պատմական տեսակէտով, որպէսզի պատերազմ մը
վերջացած նկատուի, պէտք է անհետացած ըլլան անոր
շարժուկները: Միջոցաւ մը մեկ պատճառք անհետացած
է: Երեւելեան խնդիրը լուծուեցաւ. պատկան, գերմանական,
առինսական խնդիրները փակուեցան. Յրանաա ինքզինքը
կատարելապէս ապահով կը գրահ հն: 1914ին քաշուած
սուրը գեւ իր պատեանը չէ դրուած և նոր զոհեր կը
փնտռէ:»

Եզրակացութիւն,— «Կորսնցնելիք ժամանակ չու-
նինք: Ի գէ՛ն»

Նոյն անձնութեամբ կը պրպտեր թունդ Պոլսոյ բէմական օրկանը, «Ճիւճհուրիէթ, իր խմբազրին՝ Եծուս նատիի բերնով: Միջնակեալ ըսնը որ այս ամբողջակարը նոր Թուրքիոյ սահմանադրութեան հիմնադրիներէն մէկն է, և ջերմ կուտակից՝ Թուրքերը շեւիկ զինակցութեան: Պարզելով վտանգի պատճառները, Թուրք Հրապարակազիրը առանձնապէս կը ծանրանար Ռուսիոյ դիրքին վրայ և կը հարցնէր.

« Կարելի՞ բան է որ Ռուսիա միշտ այսպէս օրէնքէ դուրս նկատուի: Ինչ կայ աւելի բնական քան այն որ Ռուսիա փոփոխք եւրոպական պետութիւններու: Նոր տակն ու վրայութեան մը կամ նոյն իսկ ինքը աշխատի փութացնել այդպիսի իրարանցում մը:

« Եւ սովորական սպառնալիքները «Թուրքիան ռեպ ժայռ մըն է սրուն վրայ պիտի փշուրին չարձակողները»: Կամ, «Մարդիկ Հանդիսատես պիտի ըլլան այնպիսի դէպքերու որոնք մեծապէս պիտի փոխեն աշխարհի քարտէսը»:

Կը վիշենք որ 1915ին ալ, երբ նոր թուիչ կ'առնէր Մեծ Պատերազմը, Հանգուցեալ «Թանխը» այդ պիտի ազդարարութիւն մը կ'ուղղէր խմբազրականով, — և տեսանք Հոյսիջինջ Սարսափները:

Բայց, ինչպէս ըսինք, աջ ու ձախ փէջելով Հանդերձ, Թուրքերը բաւական զգոյշ են այս միջոցին, և զոնէ Անգլիոյ բարեկամութիւնը շահելու տրամադրութիւն մը կը մտածեն յայտնի անդլիստեանցիներ:

Այս կարգէն է Աղաօղու Աճմէտ, Համիլամական և Համաթուրանական Հոսանքին ամէնէն արտաւոր ներկայացուցիչը, որ սրտառուչ խօսքեր կ'ուղղէ Անգլիոյ պահպանողական կառավարութեան, որ պէտքի դառնան իրենց աւանգական ճամբուն — Թուրքիան ուրիշներուն դէմ պաշտպանելու՝ քաղաքականութեան: Եւ ի՞նչ Հաւաստիքներ.

«Մինչև Հիմա Համլիլամութեան սարսափը առաջ կը բռնէ. սակայն բրիտանական զիսպանը ան ձամբ տեսաւ թէ Թուրքիոյ մեջ խելքը զուլբը ոչ մէկ մարդ կայ, որ այս տեսակ ցնորքէ մը տարուի: Թշնամութեան պատճառ չկայ և դիրքին է Համաձանիլ, եթէ Անգլիոս դառնայ իր աւանգական քաղաքականութեան»:

Նոյն տեսակէտը կը պաշտպանէ ուրիշ թերթ մը, «Վազըթ», նախկին իթթի-Հատականի բերնով. պայմանաւ որ «Անգլիոս Հաւաստիքներ տայ թէ զրգովէ քաղաքականութեան մը չպիտի Հետեւի մեր արեւելեան սահմաններուն դէմ»:



Այս մտահոգութեան անբաժան մասը կը կազմէ,

այլևս բրդական մղձաւանջը:

Նոր իրողութիւն չկայ այս ճակատէն: Քիւրտերը իրենց վերքերը կապելու գրաւած են Ժողովներ, ծրագիրներ, պատրաստութեան շրջան է: Երկրին հէջ մասնակի խրատափեր անպակաս են միշտ. իսկ աճող սարսափի քաղաքականութիւնը, այսպէս կոչուած «մարդազործումը» կը շարունակուի ծանօթ բարբարոսութեամբ: Հազիւ կարելի է փախստեալ յուրեր առնել, այն ալ փախստականներու միջոցաւ: Մանրամասնութիւնները կարևոր չեն. բուն Հարցը՝ բնաջնջման ծրագիրն է որ կը գործարարուի անխափան և որ կըրնայ մահացու Հարուած տալ քուրտ ժողովուրդին, եթէ Հակազդեցութիւնը ուշանայ:

Իրապիկները կը Հոսս առնին թէ ներքին, յեղու-փոխական կազմակերպութիւնը կը գործուոյ Քիւրտիստանի մէջ, շարքեր կազմելու, նիւթական միջոցներ ձարելու և Հրոսակային կոնիներ մղելու Համար: Չգիտենք իրականութեան ս'ըքան կը Համապատասխանն այս տեղեկութիւնները. բայց կը թուի թէ արտասահմանի թիւրտ վարիչները տակաւին կ'որոճան ընդարձակ ծրագրի մը վրայ, մեծ յոյսեր կապելով արտաքին ուժերու: Ամէն պարապի մէջ, Քիւրտերը ալ նահանջի ձամբայ չունին, և որքան արագ շարժին, այնքան կը շահին:



Եսրունակելով Թուրքիա մնացած օչ-Թուրքերը թրքացնելու քաղաքականութիւնը, Էնկիւրի միջոցներ կը Հնարէ բերդը ներսէն գրաւելու, իրենց իրենց մարդե՛ով թակարդը ձգելու Համար փորձամասնութիւնները:

Այս խաղին Համար սքանչելի պատրուակ 'ը պիտի ըլլար Մարտ 24ի դէպքը երբ ափ մը մարդիկ խուժեցին Պոլսոյ Ազգ. Վարչութեան Ժողովարար, պահանջելով Պատր.՝ Տերապահչին և Քաղ. Ժողովին Հրամարումը: Խաչտարգէտ Հոնգամանք ունէր ցուցարարներուն կազմը, և և քեզ մնաց որ յաջողէր ձեռնարկը, իբրև «ազգային ձայն»: Թիւրքերը նոր պատեհութիւն մը գտան թոյն սրակելու, և փափոսաբ. թէ Հայերը չեն ուզեր Հրամարիլ Լոզանի դաշնագրին տրամադրութիւններէն: Բայց կարճ տեսեց զաւելարը, որովհետև զերակատարները իրենց ալ լաւ սարժած չէին իրենց դիրքը: Հրապարակը Հանդարտած է այժմ, և ԹուրքեՀայ Միութիւնը, օր ամէն միջոց կը փորձէ Պատրիարքարար ձեռք անցնելու, նորէն բռնած է խաղաղ թափանցումի ձամբան: Միութեան Թուրք նախագահը և գործն անգամներէն Տրքտ. Եաղուպեան Էնկիւրի գացին շնորհ մուրալու, Համ-

բուրերով Մուսթաֆա Քեմալի ձեռքը: Առաջին շնորհը եղած է արդէն.— Հայերը կրնան օրափոխութեան երթալ Պալէն, քանի մը ժամ հետո, դէպի Եպրոփա և Եաքածը: Երկրորդը կանոնագիր մըն է, որ պետի պատրաստուի հաստատարիներուն կողմէ, աշխարհական և կրօնական գործերը բաժնելու, և նոր մարմիններ ստեղծելու համար:

Պատրիարքարանի հաշուեկարգարն է որ կը կատարուի, զգուշութեամբ, և իբրև հետեանը արգիական պահանջներու:

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

**ՄԱՐԲՍԻՉՄԻ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՀԱՅԳԸԼԲԵՐԳԻ ԾՐԱԳՐՈՒՄ**

Ա.

ԱՐԴԻՆԱՐԲՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄԸ

Այս տեսութիւնը Էրֆուրտի Մրազում ձեւակերպւած է հետեւեայ հակիրճ սոցիոլոլ.

«Բուրժուական հասարակութեան անտեսական զարգացումը բնանհրաժեշտօրէն (mit Naturnotwendigkeit) տանում է: Եւրի անհետացումը մտոր անտեսութեան, որի հիմքն է կազմում բանտրի սեփականատիրութիւնը արդիւնաբերութեան միջոցների վրայ... Արդիւնաբերութեան միջոցները բաժնուած են մեկաշնորհը համեմատաբար փոքրաթիւ կապիտալիստներին և խոշոր կալեւածատէրերին»:

Բնականաբար, ինչպէս անէն մի տեսութիւն, նոյնպէս և այս տեսութիւնը կարող է ճշմարտութեան հանգամանք ստանալ այն դէպքում միայն, եթէ ճշտի իրականութեան տեսլիներով, կամ առեւտրի չհսկուած նրանց: Արդ, համապատասխան է նա իրական փաստերին, իսկապէ՛ս մանր տեսութիւնը գիտւած է — և այն էլ բնական օրէնքների անխուսափելիութեամբ — դէպի անհետացում:

Բուրժուական անտեսադէտները — սակաւաթիւ բացառութեամբ — այս հարցերին բացատրական պատասխան էին տալիս զեռ «Գեոմոլիտական Մանիֆեստի»ի և «Կապիտալի հրատարակութեան օրհրդը սկսած: Սակայն 90-ական թւականներին կապահմանք մայր տախի և գերմանական սոցիալիստների շրջանում: Այսպէս օրինակ՝ «Էրֆուրտի Մրագրի» հրատարակութիւնից հազիւ մի երկու տարի անց, Փրանկֆուրտի Համագումարին (1894 թ.) ման Փոլմար, Շեռնլակ և ուրիշները առաջարկ բերին, որ կուսակցութիւնը որոշ ծրագիր մշակի գիւղացական գանգաձաններին սոցիալիզմի դրոշի տակ բաշխելու համար, որովհետև մանր գիւղական տնտեսութիւնների, հետեւաբար և գիւղացիական գաւազարգի անհետացման տեսութիւնը չէ համապատասխանում իրականութեան Այս առաջարկի հիմն վրայ նշանակւած յանձնաժողովը յաջող Համագումարին (Բրեսլաու, 1895 թ.) ներկայացրեց ազարային գործնականութեան մի նախագիծ, որի

հիման վրայ Սոցիալ-Դեմոկրատիան մանր գիւղացիութեան Հասկերի պաշտպանութիւնը պէտք է ստանձնէր: Ընդունել այս նախագիծը կը շնորհակալ լսեւեայն կամ բացառապա մեղով լքել արդիւնաբերութեան կինտրոնացման կամ մանր տնտեսութիւնների անհետացման տեսութիւնը: Արա դէմ ծառայան թուր օրիորդը մարքսիստները, և Համագումարը, Կուսակու առաջարկութեամբ, ընդունեց հետեւեայ բունութեամբ.

«Յանձնաժողովի տարրային ծրագրին նախագիծը մեղծելի է, որովհետև այդ ծրագրը հետապնդում է գիւղացիութեան դուրսիւնը բարելուելու, ուրեմն և մանաւոր սեփականատիրութիւնը ուժեղացնելու Մրագրը, այսօրայ հասարակարգի մեջ, յայտարարում է, թէ Հողաձեւակութեան (Landeskultur) շահը պղծեատարիտաի շահն է: մինչդեռ, արդիւնաբերութեան միջոցների մանաւոր սեփականատիրութեան շրջանակում, ինչպէս նորոտարհետի (ինչպատրիա) նոյնպէս և Հողաձեւակութեան շահը արդիւնաբերութեան միջոցների աւելրիլ — պղծեատարիտաը շահագործողների շահն է հանդիսանում...»

Միանուութիւն կլինէր կործնի, ի հօրէի, թէ նման բանաձեւերով կարելի է խեղդել մի պահանջ, որ իրականութիւնից է մեռնող աւեւում: Եւ իբրք՝ Բրէսլաուի Համագումարից յետայ ձայները արդիւնաբերութեան կինտրոնացման տեսութեան դէմ ոչ միայն չլսեցին, այլ և բազմապատկեցին:

Եարժումը առանձին թափով ծաւալեց Սոցիալ-Դեմոկրատիայի վերին շերտերում, երբ լոյս տեսաւ 1895 թիւ պետական վիճակագրութիւնը՝ գերմանացիների անտեսագործութեան և գրագիւղացիների պատկերը պարզելով: Այս վիճակագրութիւնը, որ թւով երկրորդն էր — առաջինը տեղի էր ունեցել 1882 թ.ին — հնարաւորութիւն էր ընձեւում համեմատութեան ճանապարհով ստուգելու, թէ արդիւնաբերութեան կինտրոնացումը անտեսագործութեան ո՛ր ճիւղերում և ի՛նչ չափերով է կատարւել 1882-ից մինչև 1885-ը: Մինչդեռ մարքսիստների ու բեկիդիստների նոր վիճակագրութեան տեսլիներն էին քաջբշտւած կինտրոնացման տեսութիւնը պաշտպանելու կամ հերքելու համար՝ վրայ հասաւ և 1907 թիւ վիճակագրութիւնը. վերջինս այնքան յտակութեամբ պարզեց Գերմանիայի անտեսական զարգացման ընթացքը, որ այլևս վէճերը արդիւնաբերութեան կինտրոնացման շուրջը եթէ ոչ միտնգանայ աւելրող, գիծ մահաբացաբերական պիտի գտնակայն: Եւ իբրք, երբ անգամ Կուսակցին, որ անօրինակ յանաւորութեամբ պաշտպանւած էր այ՝ տեսութիւնը թուր ցննագատութիւնների դէմ, ստիպւած է խոտովանել, որ նա մի շարք իրես կարեւոր կէտերում չէ համապատասխանում իրականութեանը՝ պարզ է, որ վէճը հիմնական մասով վերջացած է, և վերջացած ոչ յօղուսմարքսիզմի:

Հակահարու համար թէ ի՛նչ անհերքելի փաստերի ազդեցութեամբ է կատարւում այս մարքսիստական նահանջը՝ համեմատենք 1882-ի և 1907-ի վիճակագրութիւնից այն՝

* «Protokoll des Sozialdemokratischen Parteitags in Breslau» 1894.
** K. Kautsky: Die Proletarische Revolution und ihr Programm. էջ 17—24

տեղանքը, որոնք վերաբերում են արդիւնաբերութեան կենարժանցեան խնդրին:

Արհեստ եւ ճարտարարհեստ

Սա բաժանուած է երեք կարգի. մանր, միջակ եւ խոշոր: Առաջինը զարդնում է 1—5 բանւոր, երկրորդը 6—50 բանւոր եւ երրորդը 50-ից աւելի բանւոր: Թէև մեր օրերի ընթանումով ոչ միայն 1—5, այլ և 50—100 բանւոր ունեցող ձեռնարկը մանր է համարուած " բայց և այնպէս պէտք է զեկամարինք վերոյիշեալ բաժանումներով, քանի որ մեզ հետաքրքրող վիճակագրութիւնը նրանց հիման վրայ է կառուարւած: Նախ համեմատենք արդիւնաբերական ձեռնարկների համարները հազարեակներով.

Ձեռնարկի տեսակը	1882	1907	↑ յաւելում ↑ նւազում թւով	↑ Յաւելում — նւազում %-ով
Մանր 1-5 բանւոր	2.176	1.870	- 305	- 14%
Միջակ 6-50 բանւոր	85	157	+ 72	+ 84%
Խոշոր 50ից աւելի բանւոր	9	20	+ 20	+ 220%

Այստեղից երևում է, որ արհեստի և ճարտարարհեստի մէջ խոշոր արդիւնաբերական ձեռնարկների թիւը 25 տարւայ ընթացքում աճել է մեծ չափով, միջակների քանակն աճել է զգալի չափով, իսկ մանր ձեռնարկների թիւը նւազել է փոքր չափով:

Եթէ համեմատութեան դիմենք ոչ թէ ձեռնարկներին, այլ նրանց մէջ աշխատող բանւորների քանակը՝ հստակաբար հետեւեալ հազարեակները.

Ձեռնարկ	1882	1907	— յաւելում ↑ նւազում թւով	+ Յաւելում — նւազում %-ով
Մանր (1-5 բանւոր)	3.270	3.202	- 68	- 2%
Միջակ (6-50 բանւոր)	1.109	2.715	+ 1.606	+ 145%
Խոշոր (50ից աւելի բանւոր)	1.554	4.940	+ 3386	+ 218%

Ելլալիսով ըստ այս աղբուակի՝ միջակ և մանր արհեստն ու ճարտարարհեստը, աշխատող ձեռքերի քանակի տեսակէտից, աւելի՛ կայուն վիճակ են ներկայացնում, քան թէ ձեռնարկների թիւ տեսակէտից:

* Բերնշտայնը իր «Der Sozialismus einst und jetzt» գրքում (էջ 40) պատմում է, որ Բեռլինի մետաղագործները 1902-ին իրենց արհեստակիցներին վիճակագրութիւնը կազմելու համար բաժանուած են մետաղագործական ձեռնարկները երեք կարգի հետեւեալ հիմունքներով. մանր՝ 1—500 բանւորով, միջակ՝ 500—2000 բանւորով և խոշոր՝ 2000-ից աւելի բանւորով:

Առեւտուր եւ հաղորդակցութիւն

Պարսկերը զգալի կերպով փոխուած է, երբ մենք մարտարհեստից անցնում ենք առեւտրի և հաղորդակցութեան ձեռնարկներին: Այստեղ նւազած չէ նկատուած ո՛չ ձեռնարկների թիւ և ո՛չ էլ աշխատող ձեռքերի քանակի տեսակէտով: Միայն աճուածը շատ աւելի մեծ չափերով է կառուարւած խոշոր և միջակ ձեռնարկների մէջ, քան թէ ճարտարարհեստի դեպքում նկատուեցինք:

Ձեռնարկների և բանւորների թիւը	1882	1907	Յաւելում թւով	Յաւելում %ով
Մանր ձեռնարկ	676	1.204	528	80%
Բանւորներ	1.000	2.000	1.000	100%
Միջակ ձեռնարկ	26	76	50	192%
Բանւորներ	270	878	608	235%
Խոշոր ձեռնարկ	0,443	2,8	2,337	505%
Բանւորներ	54	395	341	632%

Ճողազործութիւն

Բորսովին այլ դասակեր ենք ստանում մենք հողագործութեան վերաբերեալ թւերի համեմատութիւնից: Այստեղ անտեսութիւնները բաժանուած են 5 խմբի: Մանր անտեսութիւնը ընդգրկում է երկու խումբ. առաջին՝ 2 հեկտարից պակաս հող ունեցող և երկրորդ՝ 2—5 հեկտար ունեցող: Միջին անտեսութիւնը բաղկացած է մի խմբից՝ 5—20 հեկտար ունեցող, իսկ խոշոր անտեսութիւնը երկու խմբից. առաջին՝ 20—100 հեկտար և երկրորդ՝ 100 և աւելի հեկտար ունեցող անտեսութիւններ: Սրանց համարների աճումն ու նւազումը, 23 տարւայ ընթացքին, արտայայտուած է հետեւեալ հազարեակներով.

Տեսակ	1882	1907	+ Յաւելում — նւազում թւով	+ Յաւելում — նւազում %ով
Մանր				
Մինչև 2 հեկտ.	2000	3.000	+ 1.000	+ 50%
2—5 հեկտար	980	1.006	+ 26	+ 2,6%
Միջակ				
5—20 հեկտար	926	1.065	+ 139	+ 15%
Խոշոր				
20—100 հեկտ.	282	262	- 20	- 3,6%
100ից աւելի հեկտ.	25	23	- 2	- 8%

Ելլալիսով մենք տեսնում ենք, որ մենք ճողագործական մանր անտեսութիւնների թիւը վերոյիշեալ ժամանակամիջոցում աճած է 1.026.000-ով կամ 52, 6%ով, իսկ միջակ անտեսութիւնների թիւը 139.000-ով կամ 15%ով՝ խո.

շոր տնտեսութիւնների թիւն, ընդհանուակը, նազում է 22,000ով կամ 11,6% -ով, այսինքն կատարուած է ճիշտ արհեստակը այն պրոցէտը, որ նախագծուած էր ձարքսիզմը կարգիւնարելու թեան կենտրոնացման տեսութեամբ:

Լեռնաքարական պոխո ինէր տնշուշտ պարզի նակ թէ այդ տնտեսութիւնների մէջ աշխատողները է՛նչ չափով են շատացել կամ քչացել: Սակայն դժբաղդարտը 1882-ի և 1907-ի վիճակագրութիւնները այս տեսակէտից տարբեր հիմունքներով կարգուած լինելով՝ համեմատութեան եղբեր չեն տալիս: Ընդհանրապէս կարող ենք ասել, որ Հոդի աշխատարների թիւը այդ ժամանակամիջոցում նազել է: Գիւղական ազգաբնակիչները, որ 1882-ին Գերմանիայում 26.318.000 էր հասնում, 1907ին հաշուած էր 25.883.000 իսկ երկարգործութեամբ պարագործների թիւը 19.225.000-ից իջել էր 17.681.000-ի: Այս նազումը բացարձակ առումով աչքի չէ ընկնում. սակայն եթէ նկատի ունենանք, որ վերոյիշեալ 25 տարւայ ընթացքում Գերմանիայի ազգաբնակչութիւնը աճել է 36% -ով, իսկ բարձրների բնակչութիւնը գրեթէ կրկնապատկել է, 18.904.000-ից բարձրնարով 35.837.000-ի, այն ժամանակ գիւղական ազգաբնակչութեան և Հոդի աշխատարութեան նազումը իրաւ զգալի կլինի:

Եթէ պատկերին ամբողջացնելու համար համարենք տնտեսագործութեան վերոյիշեալ երեք ճիւղերի աճման (+) և նազման (—) տոկոսները թէ՛ ձեռնարկների և թէ՛ աշխատող ձեռքերի քանակի տեսակէտից՝ կոտանանք հետևեալ ախտակը.

Ձեռնարկի տեսակ	Մըհետ և Առևտուր ճարտարահետ	և Հազարգր.	Հողագործութիւն
Մանր	— 14%	+ 85%	+ 52,6%
Բանւորներ	— 2%	+ 100%	—
Միջակ	+ 84%	+ 192%	+ 15%
Բանւորներ	+ 145%	+ 235%	—
Խոշոր	+ 220%	+ 505%	— 11,6%
Բանւորներ	+ 218%	+ 632%	—

Ի՛նչ է ասում մեզ այս ախտակը, այն՝ որ մանր ձեռնարկների անհետացման տեսութիւնը իրական փաստերի կապիս խեղաթիւրումն է հանդիսանում: Եւ իրօք՝ երբ տնտեսագործութեան մի ճիւղում (արհեստ և ճարտարարհեստ) մանր տնտեսութիւնները 25 տարւայ ընթացքում նազում են 14%-ով իսկ միւս ճիւղերում ամում 85% -ով (առևտուր—ազգրաբնակչութիւն) և 53,6%-ով (հողագործութիւն) ապա խօսելի նրանց անհետացման մասին անկարելի է առանց իրականութիւնը խեղաթիւրելու:

Սակայն արգար լինելու համար պէտք է ասենք, որ այս տեսութեան հեղինակները, Մարքան ու Էնգելսը, իրականութիւնը անտես առնելու հետեանքով չէ, որ ընկել են սխալով մէջ, այլ այն պատճառով, որ նրանք մի սրշ երկրում, տնտեսագործութեան մի սրշ շրջանի և մի սրշ

ճիւղի վրայ կատարած ուսումնասիրութեան եզրակացութիւնները ընդհանրացրել են բոլոր երկրների և տնտեսագործութեան բոլոր ճիւղերի համար:—

Ինչպէս յայտնի է, Մարքան ու Էնգելսը իրենց տնտեսադիտական տեսութիւնները կառուցել են Անգլիայի արդարացումն աչքի առաջ ունենալով: Այս երկրում, մի շարք իւրայատուկ պայմանների շնորհիւ, որոնց վրայ կանգ առնելը շատ կընդարձակէր մեր յօդածի մասը, կապիտալիզմը, մանաւանդ սկզբնական շրջանում, բուռն թափով լիտ է դրում մանր տնտեսութիւնները ոչ միայն արդիւնագործութեան, այլ և հողագործութեան մէջ: Մանր տնտեսութեան այս նահանջը առանձնապէս աչքի է ընկնում տեքստիլ արդիւնարներու մէջ, որ իբրև ամենապակի և ամենալատարեալ կապիտալիստական տնտեսագործութիւն՝ Մարքսի և Էնգելսի՝ յատուկ ուսումնասիրութեան առարկան է դառնում: Այստեղ նրանք յատկօրէն տեսնում են, թէ ինչպէս մանր և հիւտող մեքենաները մեռելութեան են դատապարտուած մեռելով աշխատող արհեստագործներին, և թէ ինչպէս նախկին մանրաններն ու ջուլհակները կլանուած են խոշոր, կապիտալիստական գործարանների կողմից: Այս ելեւայթը տարածելով Անգլիայի տնտեսագործութեան բարձր ճիւղերի վրայ, իսկ Անգլիան էլ, անալոգիական (նմանութեան) մեթոդով օրինակ (Musterland) դարձնելով բոլոր կապիտալիստական երկրների համար՝ նրանք կիրառած են արդիւնարներու մեռելութեան կենտրոնացման և մանր տնտեսութիւնների անհետացման այն տեսութիւնը, որ այնուհետեւ մարքսիզմի անկիւնաքարերից մէկն է դառնում:

Յետագայ տնտեսական զարգացումը, ինչպէս տեսնք, չէ արդարացնում այս տեսութիւնը: Եսիս պարզուած է, որ տեքստիլ արդիւնարներու թիւն օրինակ չէ հանդիսանում մեռելների համար. սրանցից ամէն մէկը, նայած տեղին և հում նիւթի ճշակութեան պայմաններին՝ յաճախ շատ ուրոն մեծով է զարգանում: Քարգում է նաև, որ կապիտալիզմը ստեղծելով հսկայական շուկաներ և արտակարգ թափով զարգացնելով ամէն տեղ ապրանքների և փոխանակութեան պահանջը՝ դրանով իսկ հնարարութիւն է ստեղծում մանր տնտեսութիւնների զոյսութեան համար: Դեռ աւելին՝ կապիտալիզմը Հէնց ինքն էլ առաջ է բերում բազմալիտի նոր մանր տնտեսութիւններ (տնայնագործութիւն ևն) որոնք օժանդակ դեր են կատարում իր համար: Վերջապէս պարզուած է նաև, որ ժողովրդական տնտեսութեան մի չափազանց կարեւոր ճիւղի— գիւղատնտեսութեան մէջ, կենտրոնացման տեսութիւնը կատարեալ պարտութիւն է կրում մի շարք պատճառներով, որոնցից զխառնորհին են.— Առաջին՝ որ հողաձեռքութիւնը օրգանական նիւթերի հետ գործ ունենալով և յաճախ կարեւոր լինելով բնական պատահարներից՝ մեքենաների գործողութեան համար չէ ներկայացնում այն գիւրութիւնները, ինչ որ մենք տեսնում ենք արդիւնագործութեան մէջ, հետեւաբար և կենտրոնացման տեսութեան ամենաեական պահանջներից մէկին չէ համապատասխանում: Երկրորդ՝ որ խոշոր կալածատերերը մի շարք անկապատ հանգամանքների շնորհիւ, միշտ չեն կարողանում անհրաժեշտ քանակութեամբ վարձու աշխատաւորներ գտնել, մինչդեռ արդիւնագործութեան լիտելը աշխատաւորների

«պահատի բանակներ» են կանգնած: Երբորդ՝ որ դիւզցի- ները գործակցական ընկերութիւններէ միջոցով կարողանում են մրցունակ դառնալ՝ հակակշռելով այն առաւելութիւննե- րին, որ խոշոր կալածատէրը իր դրամազլխով երեսան է բե- րում բերքի արտածման և սպառման գործում: Զոր- րորդ՝ որ պետական իշխանութիւնները դիւզցիական գասի անհետացումը թաղաքական և անտեսական տեսակէտեց Քասակար Համարիով՝ բազմապիսի միջոցներէ են դիմում ձանր գիւղատնտեսին կենսունակ գործնելու Համար: Պարզուն է, ուրեմն, որ այս և նման մի շարք պատճառ- ներով, ձանր Հողատիրութիւնը ոչ միայն յաջողութեամբ մրցում է խոշոր կալածատիրութեան դէմ, այլ և ցամաքա- յին Եւրոպայի գրեթէ բոլոր երկրներում յաղթահարում է նրան:

Հասարակական գիտութիւնների և մասնաւորապէս արեւ- տեսագիտութեան մէջ անարգիական մեթոդի կիրառմանը կողմակից չլինելով՝ Հանդերձ՝ մենք մեծ կերպ կա- րող ենք հասկանալ, որ Մարքսն ու Էնգելսը, անգլիական փորձից տարելով, և ի վիճակի չլինելով նախատեսել տըն՝ տեսական զարգացման այն ընթացքը, որ ուրազուած է նրանց տեսութիւնների ձեւակերպութիւնից յետոյ սխալ ընդհանրացումներ են անում ձանր տնտեսութիւնների անհե- տացման ձառնի: Բայց մենք դժարանում ենք հասկանալ այն յամառութիւնը, որով նրանք և մասնաւոր նրանց Հե- տետրդները պաշտպանում են այդ տեսութիւնը և՛ այն ժամա- նակ, երբ ընկերային-տնտեսական զարգացման փաստերը սկիւնախորէն ժխտում են այդ տեսութեան ճշտութիւնը՝ Այսպէս օրինակ, Հէնց այն օրերին, երբ մի շարք ընդ- գիտիկաներ Գերմանիայում և Յրանսիայում, տեսնելով որ դիւզցիութեան անհետացման տեսութիւնը չէ արդարանում, ընկերվարական ազդարային ծրագրի պահանջն էին առա- ջադրում՝ Էնգելսը Հեզնելով նրանց գրում է.

«Մեր ձանր դիւզցին, ինչպէս անէն մի մա- ցրորդ՝ արդիւնաբերական Հնացած ձեւի, անփրկելիօ- րէն դատապարտուած է անհետացման: Նա ոչ այլ ինչ է, բայց ի՞նչ ևս պարզապ պրոլետար» *):

Եւելի ևս մեծ յամառութեամբ այս պայքարը բեխիտու նիստների դէմ շարունակում էին Մարքսի և Էնգելսի ա- շակերտները, Կ. Կաուցկու գլխաւորութեամբ, ՅՊական թա- կանների վերջերին, երբ 1895 թիւ վիճակագրութիւնը այլևս կասկած չէր թողնում, որ ձանր տնտեսութիւնների անհե- տացման տեսութիւնը սխալ է, իսկ Եւրալոզ Դաւիթը իր «Der Sozialismus und die Landwirtschaft» գրքում գիտակատորէն ճշտել էր այն պատճառները, որոնք ան- Հնարին են զարձնում ձանր դիւզցիական տնտեսութիւն- ների անհետացումը:

Այսօր դրութիւնը փոխել է, ի հարկէ, և փոխել է շատ զգալի կերպով: Այսօր Կաուցկին անգամ ստիպւած է խոստովանել, որ

«Մի մեծ, վճռական նշանակութիւն ունեցող արդիւնազորական ճիւղ կայ սակայն, որտեղ մնաց

* F. Engels: Die Bauernfrage in Frankreich und in Deutschland. («Die Neue Zeit») 1894/5 I Հատար էջ 295:

«տնտեսութեան անհետացում» մասին ոչ մի իրա- սով խօսք չիցն յի կարող * Դ Դա դիւզցիական տնտե- րիւնն է... Դիւզցին այնտե խոշոր կալածատիրու- րեան կողմից կանալու վտանգի տակ չէ գամուած. նրա վտարացումն (Verkommen) էլ շատ կողմե- րով դադարել է: ... Էրժուրտի Մրագրի գրեթեց ի վեր այս բանը յստակօրէն երեւում է: Այս կեռում փոխել է մէկն այն նախադրեաներից, որոնցից նա մեկն էր »: **

Իրականութեան անողք պահանջին ցանկանալով ընդա- ւաջ գնալ, գերմանական Սոցիալ-Դեմոկրատիոն Էրժուրտի Մրագրի այն Հատուածը, որ դիւզցիական է օտյն յօդուածի սկզբում՝ փոփոխում է իր նոր ծրագրի մէջ Հետեւելու կիր- պով:

«Տնտեսական գորգացումը ներքին օրինականու- րեամբ ուժեղացրել է կապիտալիստական խոշոր ար- դիւնագործութիւնը, որը ճարտարագիտական, առևտրի և Հաղորդակցութեան մէջ Հնագիտե ձանր տեսու- րիւնը յետ է մղում և նրա ընկերային նշանակու- րիւնը նւազեցնում... Հողի մի մեծ մասը գտնում է խոշոր կալածատիրութեան ձեռքին, որ խոշոր գրա- մատիրութեան բնական զաշնակիցն է Հանդիսանում: Այսպիսով անտեսուպէս վճռական նշանակութիւն ունեցող արդիւնաբերական միջոցները մեռուշորհն են դարձել Համեմատարար փոքրաթիւ կապիտալիստ- ների, որոնք դրա շիւղհէն իշխում են Հասարակու- րեան վրայ»

Նոր ծրագրի բացարական մասի մէջ Կաուցկին ձանր տնտեսութեան վիճակը Հետեւելալ օսողբով է բնորոշում.

«Արդիւնաբերութեան որոշ ասպարեզներում ձանր տնտեսութիւնը ամբողջովին անհետանում է, ինչպէս օրինակ մանաւագործութեան մէջ: Որոշ ասպարեզ- ներում նա արագօրէն յետադիմում է, ինչպէս գարեւ- ջրի պատրաստութեան գործում: Սակայն ձանր տըն- տեսութիւնը դեռևս յարատւում է այն ասպարեզ- ներում, որոնց մէջ մեքենան դու չէ կիրառուած, կամ կարող է կիրառուել ձանր տնտեսութեան մէջ էլ: Սակայն ընդհանրապէս գերակշռող և թօխող ար- դիւնաբերութեան ձեւը Հնագիտե խոշոր տեսութիւնն է դառնում և այն էլ և րասարեհնասային խոշոր տնտեսութիւնը» ***

Եթէ այս բնորոշումը ճիշտ է, ի՞նչ ճիշտ է մասնա- ւորապէս նրա վերջին մասը, ուր անկասկած խօսքը վերա- բերում է առաջին Հերթին դիւզցիականութեան, որ նաև մեր օրերում «մի մեծ վճռական նշանակութիւն ունեցող արդիւնագործական ճիւղ» է Հանդիսանում, ապա պարզ է, որ նոր ծրագրի մէջ կատարուած փոփոխութիւնը իր մէջ լիովին չէ անդրադարձնում իրականութիւնը նա խօսում է միակողմանիօրէն խոշոր արդիւնաբերութեան յառաջդիմու- րեան մասին, Հարկ է Համարում վեր Հտնել անգամ խոշոր

* Ընդգծումը մերն է Ա. Ջ.
** K. Kautsky: Die Proletarische Revlution und ihr Programm, Կրկրորդ հրատարակ էջ 17, 18, 20:
*** «Das Heidelberger Programm. Grunsaezte und Forderungen der Sozialdemokratie. էջ 9:

կազմաւորութեան զեր ժամանակից անստույթանէ 2, բայց բացայայտ կերպով, զրակակցեմ չէ իւրով մանր գաղտնիական անտեսութեան մասին, որը թէ՛ մշակողհոգի տարածութեամբ, թէ՛ արտադրանքի քանակով և թէ՛ ընկերային կշռով ու ազդեցութեամբ շատ աւելի՝ մեծ արժէք է ներգալցացնում, քան խոշոր կաւաճաւորութիւնը

Այս միակողմանիութիւնը ցոյց է տալիս, թէ մարքսիստները համար ինչքանի՞ զմար է բաժանել հին դոգմաներից: Անգամ այն դէպքում, երբ հինց իրենք ստիպւած են խոստովանել մարքսիստական այս կամ այն անստույթան անկալունութիւնը՝ իրունք զմարանում են պաշտօնական ձեւակերպութիւն տալ այդ խոստովանութիւններին:

Այս բարբոյ հանդերձ չի կարելի մխտն, որ սքսիստ նաբերութեան կենտրոնացման տեսութիւնը Հայրըրբրգի Մրարգում էրբփորտի Մրարգից տարբեր ձեւակերպութիւն ունի: Մի գործ թողնելով այն, որ բուս նոր ծրագրի՝ անտեսական զարգացման պնդէր այլևս «բնասմերածեսօտեմ» չէ կատարում, այլ «ենբրին օրինակամութեամբ» — մի փոփոխութիւն, որ մարքսիստական նաշանքի մի շատ հետարբրական, բայց մեր նիւթի որսու գոնիւ պնդրի է վերաբերում — եղած տարբերութիւնները խոստում են երկու կէտի մէջ:—

Սրանցից առաջինն այն է, որ նոր ծրագրում այլ ևս խօսք չկայ մանր անտեսութիւնների անհետացման մասին. նրանք հետզհետե նաշանցում են խոշոր արգելաբարբութեան պռաշ, հետզհետե կորցնում են իրենց ընկերային նշանակութիւնը. բայց չեն անհետանում, ինչպէս պնդում էր էրբփորտի Մրարգը:

Երկրորդ տարբերութիւնն էլ այն է, որ նոր ծրագրում բորբ անստիւցի մանր անտեսութիւնները ճէկ ընդհանուր կաթայնի մէջ չեն նետում և ոչընչացում, ինչպէս այդ անում էր էրբփորտի Մրարգը: ր այլ այսուք շեշտում է, որ նաշանցող և հետզհետե իրենց ընկերային նշանակութիւնը կորցնող մանր անտեսութիւնները վերաբերում են արհետին և մարտարահտութիւն, աւակտին ու հարդրակցութեանը: Այսպիսով սրանց և զիւրական մանր անտեսութիւնների միջև մէկ անըրպիտ է բաշւում, որով լուեյեայն ընդունում է, որ վերջիններս չեն պտովանում յետպիսող անտեսութիւնների թիւն:

Արդենարբութեան կենտրոնացման տեսութեան զեթ այս չափի փոխակերպութիւնը հաստատուց յետոյ՝ հարց է մարում. — Ի՞նչ ազդեցութիւն պէտք է առաջանայ որտի՞ք Այգիալ-Դեմակրատիայի գործնական քարտեակամութեան համար: Փանի այդ կուսակցութիւնը կանգնում էր էրբփորտի Մրարգի տեսակէտի վրայ, այսինքն այն տեսակէտի վրայ, թէ արդիւնարբութիւնը կենտրոնականով ոչընչացնում է բարբ անստիւցի մանր անտեսութիւնները՝ նրա անխիբք պարբ էր սպասել մինչև կենտրոնացման պրոցէսը աւարտել, և արտադրական միջոցներից զրկւած ասանեակ՝ միլինատար, հարբիւր միլինատար ժողովրդական գանգաւանները մի քանի ասանեակ հարբ, թերևս մի քանի հարբ, կապիտալիստների հետ հաշիւ նստէին՝ ընկերվարքայան հասարակակարգը կատարեցու համար: Իսկ այժմ, երբ այդ պրոցէսի վաթմանը չէ երևում, երբ մանր անտեսութիւնները արդենարբ

թեան մի ծիրում թեթև նաշանց կատարելով միտ ծիրորում ընդհակառակը յառաջադիւում են, ի՞նչ պէտք է լինի ընկերվարականի վերաբերմունքը նրանց հանդէպ: Գարո՞ղ է նա անտորբեր զտնել զէպի օշի ժանր խանութներն ու արհեստանոցները, որոնք 1882-ից մինչև 1907-ը ընդհանուր թւով 2.851.000-ից բարձրանալով 3.074.000-ի՝ իրենց դերն են կատարում երկրի տնտեսական և ընկերային կեանքի մէջ: Խո՞ւմ նպատակաշարմար է անտես անել մարքայնէ մանր զիւրական անտեսութիւնները, որոնք նոյն ժամանակամիջոցում 2.980.000-ից աճելով 4.006.000-ի՝ ամէն տեսակէտից կարեւոր ոյժ են հանդիսանում պետական կեանքում: Եւ այդ արամաշումութիւնը պէտք է պտտախուներ այս հարցերին — ո՞չ: Եւ այդ արամաշումութիւնը պէտք է թելադէր ընկերվարականներին՝ միջոցներ խորհի զործակցական ընկերվարութիւնները, վարկային հաստատութիւնների կամ այլ ճանապարհով օգնութեան գալու այս շանհետացող անտեսութիւններին և նրանց, կամայ կամայ ընտելացնելով համաշխարհ անտեսագործութեան ձեւերին, զէպի սցիալիզմի հումը քաշել:

Մականի ինչքան դժար է մարքսիստները համար հաշտել այն մտքի հետ, որ իրենց դաւանած «գիտական սոցիալիզմի» այս կամ այն կէտը չէ համապտտախանում իրականութեան, նոյնքան և աւելի դժար է որիզերն իր ընկերային — անտեսական քաղաքականութիւնը, որ հակասում է նրանց մինչև օրս բունած ընտացքին: Այդ պտածառով էլ մենք հայրըրբրգի Մրարգի գործնական պահանջների մէջ չենք զրտնում որ և է քայայայտ արտայայտութիւն այս ուղղութեամբ: Միայն ծրագրի բացատրական մասում, թորբերա Եմիլը, կուսակցութեան անտեսական քաղաքականութիւնը հիմնաւորելիս, մի քանի խօսք է ասում այն մասին, որ մանր զիւրական անտեսութիւնները կարիտալիստական շինելով, չպէտք է բունագրաւորին, որ գործակցական միութիւններով պէտք է նպատել նրանց անտեսագործութեան մեքենացմանը և արտարանքի շահաւետ սպունումը, որ զիւրատնտեսական զիտելները մտաշելի վարոցների միջոցով պտի տարածել մանր զիւրակութեան մէջ ևն: Արքան էլ այս արամաշումութիւնները նոր լինելի է սցիալ-գեմեդորտտական կուսակցութեան համար, որ մինչև հիմա զիւրացիութեան հանդէպ — մանր թէ խոշոր միւնտոյն հործիշ բացարական, կամ արնապի անտարբեր վերաբերմունք է ունեցիւ, այնտաննային ևնը նրանց մէջ աւելի՛ շուտ զիւրացիներին ընկերվարութիւնից շխանեցելու մտահոգութիւնն ենք տեսնում, քան թէ մի դրական աչքարային ծրագրի ներկայութիւնը

Հոգեբանորեն հասկանում կեր, ի հարկէ, մարքսիստները վճարահաշումութիւնն այս ինչպում: Կես զարուց աւելի է, ինչ նրանք պայքար են մրտել այն ընկերվարականների դէմ, որոնք արիւնարբութեան կենտրոնացման և անտեսանց զիւրացիական անտեսութիւնների կենտնականութեան խնդրում այլ տեսակէտերն են պաշտպանում: Մասնեակ ասրիններից ի վեր նրանք հեծնում են այդ ընկերվարականներին իբրև «մանր բարձրական» գաղափարաբանների: Պահանջել, որ նրանք մի թախշտի, առանց վերապահութիւնների, կակոնէին այս մարդկանց տեսակէտերի վրայ — մի թէ՛ խիստ կլինէր: Շամանակը կկատարի իր գործը, թերևս կամայ

կանաց, բայց առանց ցարխ ու զննողների Այսօր, մարքսիստները իրականութեան հարկարարների ասկիւրինց նահանջի ալքն են արտասանում. տարակուսչ չունինք. որ նոյն իրականութեան անողոք պահանջով վաղ բեկը ևս պետք է արտասանեն և մեջ գրադիպող խնդրում, վերջնականապէս որդեգրեն այն սուսկետը, որ միշտ պայծառանկ է բեպլլատական ընկերվարութիւնը և որը վիտական է հէնց այն պատճառով, որ լիովին համարպատասխանում է անստեղծական-ընկերային դարգ սցցման իրական ընթացքին

Ա. Ա.

ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՄՎՈՒՍԻ ՆԵՐՍՈՒՄ

Երևան, Յունւար 1926

Նորից իրար են անցել հիմունքիտ շարքայիններն ու դեկավարները՝ Թէն ինչպէս միշտ իտոյնվաւ և այժմ շտնք չի ինայնում հնուանկութեան տագնապը արտաքին պայմաններով բացարձեղ, բայց կուսկան չկա, որ ներկայ իրարանդման օգտանալը ճարի և առաջ ներքին է: Եւ Որքան զեկովարների սոցիալականական փորձերը քարի են բունում, այնքան պապանծւած շարքերը լեզու են սունում, թողքում և պահանջում, որ Կրեմլի դիվատողները հասկանան իրերի ընթացքը և մի ինչ այլ բովանդակութիւն դնեն Լէնինից ժառանգութիւն ֆետցած կուսկանի մէջ որպէսզի կարողանան զանգւածները սերացահի կան գոնէ, իրենց կաշին պաշտպանել կեանքի յորձանուտ ալիքների դէմ...

Լէնինգրադից մինչև Արարատի փոշերը կուսկական բժբասները գլուխ են բարձրացրել, այս անգամ տեխի՝ յամաւ, աւելի՝ սպառնական և գրոհ են տալիս դէպի «կենդանի» ու նրանց վրայից դէպի Կրեմլի օտարկանները: Այս անգամ մրցակի չե միայն բժբատացողը և «հիւանդացողը»: Բազմահազար նոր մրցակիներ կան, որ բաւել են ընթատութեան հիւանդութեամբ և անհնարին և այլև, որ դրանց բողբին կովկասեան բուրժուաններն ուզարկեն «ուպաքինելու» համար...

Միխիթրական չէ կացութիւնը և «զանգւածների» մէջ, «Լիւանդ» է բանկրութիւնը, արդհետեւ նրա շարքերը կորցրել են յեզակատութեան հէին առայմարտկների միպպողարութիւնը»: «Լիւանդ» է կիւրը, ճբ միջին դիւզացին «բուսաններով հոկտեմբերեան աւանդներին», կուսկի հետ է սերարբանում: Լիւանդ է երրտասարդութիւնը, երդհետև «Գոտոմոլը» (երրտասարդ կոմունիստների միութիւն) տեսպին ցոյի կեանքի սպարել է դարձել. նրա անդամներն ու անդամհիները «կուսկաններեան» հայրենու առայ «ետարաններ» են արդբում ի խրախոյս և ի քաշարութիւն ամէն տեսակ վենբական բացիներին: Վերջուպէս հիւանդ է և մտարականութիւնը, որդհետև ուսացիչները ուսանողները ևև դաշնակների, սոցիալպոխականների և մենշեկիների ջարքերն են սուսարացնում...

Լէնինի ընկերբանական ընդատմների համապատասխան դեղորայքները անգոր են կուսկու այս համատարած «հիւանդութեան» դէմ և դրա հոմայ այլ բուն չէ Պուն, բայց էթէ նորից ճեռք աւելի հէին, Ճիւզոտում, վիրարժեական քանակը — Ձ ե կ ա ն Ի Կ պ Յ կ ա թ յ որ ու ս ա ղ ի ն եր ի ն և ս աս ն ո ղ ն եր ի ն, որնք չէն ուրում կրեսները դէպի խորհրդային ըէժիը դարձնել, Իեպի Ձեկա «հասկարպոխական» բանարների, և գիւզացիներին, որնք վտանգում են «մութի և մանգալի եղարայնիցութիւնը», իմա՝ «բանար-գիւզացիական իշխանութիւնը», իմա՝ բողբեկների միահետման բուսպետութիւնը: Վերջուպէս դէպի Ձեկա՝ «հիւանդանալու հոմար աւիթ փնտուղ կոմունիստների» իրիթ կուսկական «հիւ գարդիպլ» դէմ խլուրդային աշխատանքներ են կատարում:

Այս հիւանդի վիճակի ոխաձիշը պետք է համարել այն բուն քննադատութիւնները և կատարի աթոսամարբը. որ տեղի ունին այսօր կուսկական կանիքսներում: Մրանց մէջ այլև չէ տիրում նախկին երկիւզում և քրմա-թաշտ միջնորդը: Օրինակ դեռ անցիկ տարի մի Աշոտ Յովհաննիսեան, կատարելով միապետի կեչլանքով, կարող էր հանգնել կուսկական խորհրդատուում և աշխատել ամ ժողովականներին քարձիւզոչ յայնանարել: Իսկ բողբ ոչինչ էք. կուսկականութիւնը սպարել է չունի մեզինց. միակ մարը ճեր մէջ, որ գեռ կուսկականի կընում ունի՝ այնինչ գործին է: Այսօր սակայն նոյն խորհրդատուով մէջ, ուր Ազատեանները, Շահարասները և Երզնկաններն են բազմած իրենց Շատուց-հակուցելով փոխարքած քննադատութիւնները խայտառակութեան են հասնում: «Սոցիական բիւրկրատ է, սովետական զինովիկ (պարտոնեայ). նա մարնացած մենշեկիցն է մեր մէջ»: «Աշոտ Յովհաննիսեանը տիրան է, բունպետ ուսական իմաստով» «Ազատեանը... և յաշորում են դարձաւքներ, որնց մէջ չէք կարող աբուել, թէ ո՞ն է քննադատութիւն և որը հայտոյեանը և այլ որպը ինչի՞ ընարը... Աթոններն Ամէնք էլ բունած են «կենտկոմում» թուելու ցարով:

Շատ հետաքրքրական են Ազատեանի քննադատութիւնները վերջին խորհրդատուում: Հետաքրքրական ոչ թէ այն սեսակետից, որ նա առային «ստաբանն է» ճեր այս քանդած աշխարհում, այլ որովհետեւ նա, ընդամէնը մի քանի շտբաթ առաջ, ապակայն իր հոգևկար «Ճըմատարսուսները»՝ «Խորհրդային Հայաստանի» էջերում կատարելով համարձակութեամբ «Կրեյ» ընկ Ջամայանին: նա այդ համբերատար էջերում երկինք հանց «բանար-գիւզացիական օրէնարութիւնը, արհեստակցական միութիւնների գործանիքեր, խորհրդների ընտրութեան ջնաշխարհի՝ ճեւերը, խորհրդային անստարեան վերելքը, կուսկական այն մնծ բարիքները, որնցից ամէնք էլ օգուում են այս դիղիք-գրպիտում, բացի «հակադիպոխական Ջամայանիներին» ևև. ևև: Վերջին կոնֆերանսում նա էլոյթը (ներքէք, որ ճեզ ճանթացնում են մեր նոր աշխարհի նոր բուրբի հետ) ուղազլաւ է այն պատճառով, որ նա այստեղ բողբովին այլ լեզու է բանցնում քան ընկ Ջամայանին տած «պատասխանի» մէջ: Ազատեանն այստեղ համարձակում է իրեն իրենց անուով կուրը — որքան հնարաւոր է համար

ԲԱՐԻ ԳՎՈՐՈՍ

Երեւան, 5 Յունւար. 1926 թ.

ձակ լինել խորհրդային սահմաններում, ներ-կուսակցական կրկնակի դիկտատորութեան ներքոյ: Ի՛նչ խօսք, որ այս Համարձակութիւնը Հանդէս չէր գայ, եթէ նրա ամբողջ ապահոված լինէր, կամ եթէ նա դիտենար, որ իր ճառը Հենց իր ընկերներէ շնորհիւ Ջամայաններէն պիտի Հասնի: Բայց խնդիրն այս չէ, այլ այն, որ Ազատեանը «Կենտրոնի» և կուսակցութեան արտոնատէրերի Հասցէին աւելի՛ անձար-սեղի ձեգազարմքներ է շարտում, քան թէ դաշնակ Ջամայանը: — Նա գտնում է, որ խորհրդային իշխանութեան ամբողջ ապարտը (ձեքենան), Հասարակ ծառայողից սկսած մինչև «Կենտրոնի» նախագահը, տառապում է սնրու-ժեղի բերականործով: Այդպէս է և Արհեստակցութիւնների Միութիւնը, այդպէս է մանաւանդ և կուսակցական ձեքենան: Իողորն էլ տանալինթաց կամայականութեամբ ձգձուգում են այն խնդիրները, որոնք ժողովրդական շրջանակներից են գալիս:

Ազատեանի ճառերը, զուք գիտէք, շատ երկար են լինում, չափից դուրս երկար ըստ այդ էլ նրա մեղադրանքներն են եզրի: Չենք ուզում նրա օրինակին Հետեւելով երկարացնել: Բաւական է ասել, որ եթէ մեր սիրելի ընկեր Ջամայանն էլ նեղակ լինէր այս կոնֆերանսին, նա մեզ Հետ միասին կատարաբար Ազատեանի «կարծիք» ճառերի տակ:

Հօրի է ինչտակելու այն փաստերը, որոնք Հրապարակել են կոնֆերանսում կուսակցական կենցաղի այլադրակութիւնները երեսուն Հանելու Համար: Արժէ՛ արձանդակը Հոնորարի, վարձատրութեան Հողի վրայ տեղի ունեցած բզբտոցներ՝ թէ ինչու էր այսքան պիտի ստանայ, իսկ Կ-ը պակաս՝ բզբտոցներ, որոնք յոտակութեամբ նշուում են, թէ մեր կոնֆերանսներն ինչքան լաւ են իւրացրել «նոր տընտեսական քաղաքականութեան» պահանջները... Վերջապէս միտք ունի՛ դիլ աւանդ այն գաւելտական տրամադրութիւնը, որ Համակում է մեր կոնֆերանսներին, երբ նրանց պատմում են, թէ նախնի խորհրդային մարմին նախագահը եօթը անգամ կին է փոխել, կամ այն ինչ գաւառական դպրոցի տեսուչը, որ իր «խնամքին» յո՛ւննում աշակերտուհիներին բռնաբարելու Հակումներ՝ ունի՛ որովհետև կուսակցութեան թեկնածու է՝ յուսարութեան կոմիսարիատի կողմից ժայլաքաղաք է Հրախելու «թարմանուլ» Համար...

Փոխաբար, որտ արկներից ի վեր կոնֆում է կոմունիստական կուսակցութիւնը ներսից՝ արլէն, ինչպէս ժողովուրդն է ասում, դուրս է տալիս՝ Դուրս է տալիս փոխադրած քննադատութիւնը, փոխադրած խճրճանքներով, քննադատութիւնը, յշահանդրութեամբ և Հանրային կենցաղի այլադրակ արտայտութիւններով: Կրակութիւնը պէտք է Հասնի իր տրամաբանական վախճանին, որ պիտի լինի կամ կատարեալ ալլաբերում կամ անխուսափելի մահ: Այլ ելք մենք չենք տեսնուում, որովհետև այն գաղափարական ուժերն ու արմատութիւնները, որոնք անգնջելուով են կամ գաղափար չափով Հակագրում էին նման պատերազմի այժմ իսպառ ցած սքել են կոնֆերանսական կուսակցութեան մէջ:

Գ.Ս.Տ.Ղ.

Այժմ մի քանի խօսք էլ մեր Հասարակացների մասին: Իրար յետեւից այտեղ եկան, արտասահմանում իրենց ունեցածը սպառուց յետոյ, Ս. Յակովբեանը, Սնարն ու դերասան Արեւելուր: Ամէն մէկն իր Հերթին, անշուշտ, «արտասահմանեան Հայ աշխատարութեան ուղջոյն» է բերում խորհրդային Հայաստանին, ու ապա, մէկ-երկու ամիս այս կամ այն վարիչի անձ նական Հովանաւորութիւնն ու «մտերմութիւնը» վայելուց յետոյ... մուսացութեան մատնուում: Մէկ-մէկ այդ վերադարձողները սերտ են տալիս իրենց «մեկնասերներին» նրանց պատմելով. թէ ինչպէս Գաշնակցութեան վարիչները «ճայր ատրիճանի յուտետուութեան և միտիցիդի մէջ են ընկել», թէ ինչպէս Ռ. Դարբինեանը «բախտ նայողի է դնացել» (Արեւելուր խօսքերն են) ապա. գան դուշակել տալու Համար և դերբզական. թէ չէ վերջինները ձեռքն ընկած լինողը ճգնաբաց յետոյ դէն շարտելով «ամերիկահայ աշխատարութիւնը Հաշի պիտի նստի դաշնակցական պարտների Հետ (Մնարի խօսքերը):

Բայց, ինչպէս ասացի. — «Գարձողների» և ընդունողների դեւորութիւնը երկար չէ տևում. ի Հարկէ, այս Հանդամանքը անաշխիները Համար է դերբզական. թէ չէ վերջինները ձեռքն ընկած լինողը ճգնաբաց յետոյ դէն շարտելուն շատ են վարժուած, այդպիսի խնդիրների կարեւորութիւն տալու Համար:

Արեւելուրի դէմ ստամ են կրճատացնում արդեն Հայաստանի պետական թատրոնի սիրողները, որոնք իրենց «արտիստի» դիրքը խախտած են Համարում նրա ներկայութեամբ:

«Ընկ.» Մարը Համայնարանի դասախօս Հրախելց, բայց փորձական քննութեանը չըմացաւ: Երկար վէճերից յետոյ՝ Համբուած պատշաճ Հայհոյանքներով՝ «ընկ.» Ագաւտեանը յաղթութիւն տարաւ, Հակացնելով ում Հարկն է, որ Մարը մարքսիստ չէ, այլ մարքսիստ տղաւաղու կարճ՝ խեղճ Մարը անբիտի չարժանացաւ:

«Ընկ.» Ս. Յակովբեանը, որ ամենքից աւելի՛ երկար ժամանակ վայելց, դէ՞թ առերեւութ, վարիչներից ոմանց փայփայանքը (չէ՞ որ նա Կարինեանի ուղեկցութեամբ մուսաց դրծեց Երեւան), անպաճ նրան բաղդ մինչև վերջը չժպտացուց: «Պրոլետարոնների» վերջին վիճարանութեան ժամանակ, երբ նա Համարձակեց՝ Հենց իր խօսքերով ասած՝ «մարքսիստ մարքսիստներից պաշտպանել» և ըբբտու մեծաւորներին արդարացնել՝ ընկ. Կարինեանը մուսացալով «աղաքը», մուսացալով Ս. Յակովբեանի «Արեւը» ու արտասահմանեան բոլոր մատուցութիւնները՝ աչքերը գոցեց, բերանը բացեց... ու էլ մի Հարցնէք... կարծես այս բեւեղարմի մէջ վերատին «դաշնակ Սիմօնը» յարութիւն առած լինէր:

Ինտելով այս մարդկանց Հոգեկան վիճակը մօտիկից՝ մինք շատ բազմալի ենք գտնում, որ բոլոր Մնարներն ու Յակովբեանները, բոլոր Արեւելուրներն ու Ներկանալակները քր առաջ Երկիր գան— Իրանց գալը Հօ չի նմանում օտարերկրացի բանտրական պատգամաւորների գալուն Գրանց:

Հօ չեն կարող անդրկական պատգամաւոր Պ. Ուէլլըստի պէս Գարաքիլիօսը ինքնաշարժով Երեւան աւաջողորդել և ղեռքադաջ ՀՀասան՝ Գանաբեդից ինքնաշարժը դարձնել շխտակ դէպի Թորոնտո-Քուէպը, որպէսզի մեր «Հիբրոշէնը» տեսնելուց և մի լաւ քէֆ անելուց յետոյ, ինչպէ՛ս կոր Եկել են, այնպէս էլ կոյջ վերադառնան արտասահման նրանք «Հիբրոշէնից» յետոյ — որ ք միջի այլոց, Լաշատանում նոյն դերն է կատարում, ինչ որ Պետերբուրգում Լէնինի գամբարանը, որին երկրպագութեան դնալը պարտադիր է ամէն մի այցելուի Համար — ուզեն-չուզեն պէտք է լսեն ու տեսնեն, թէ ինչ է կատարում այստեղ, և վերջի վերջոյ պիտի գրուկ խոնարհչեն մեր ազատասէր ժողովրդի առաջ՝ որ ամենայն զգաստութեամբ, բայց և անօրինակ յամառութեամբ ճգնու՛մ է թոթափելու իր մտի մէջ իրանձ սարկուստեան շղթանները...

Ինչու՛ն է՛, թող վազն էլ մի նոր Մարտ գայ և Հայաստանի ու Ամերիկայի Համեմատութիւնն ունի. թո՛ղնա էլ սրա պէս, առանց ինքնիրենից ամաչելու պատճի, թէ ամերիկեան քաղաքների նոյն իսկ ամենաբանուկ և լուսազարդ փողոցներում, որ և է մարդ, եթէ զգալանը 5 դոլլար ունի, չի կարող անցնել առանց ետը նայելու, մինչդեռ այստեղ, ամենայն ընկած և մոթ փողոցներում էլ տղամարդիկ, ու «մանաւանդ կանաչը» ազատ ու անհոգ երթեւեկում են *... Թո՛ղ նոր Մարտների Հիտ նոր Յակովբեաններ էլ գան, որպէսզի առանց խղճի խայթ զգալու «Հաստացիներն» միամիտ կարծած ունկըղկըրներն, թէ իրենց ստեան բոլոր կապիտալիստական երկրները զօրիք են բանիս բուն իմաստով, թէ նրանց մէջ ո՛չ անձի, ոչ բնակարանի՝ ո՛չ խօսքի, ո՛չ ճամուռի ո՛չ խղճի որ և է ազատութիւն չկայ — մինչդեռ Պորճրգային Հայաստանում — ո՛ւ այլ բոլոր ազատութիւնները կատարելա են, որովհետեւ այստեղ, առանց գաստական որոշման ո՛չ մարդ կարող են ձերբակալել, ո՛չ բնակարան կրիւղ, ոչ էլ որ և է մէկի Համոզմունքի դէմ բռնութիւն գործադրել...

Կրկնում ենք. թո՛ղ գան այս պարտները. նրանց պատմութիւնները և Հաւաստիացումները, ոչ ոքի ծորերնէլ չեն կարող, ինչպէս և չեն ծորերցրել «ուղձական կոմունիզմի» ժամանակներից ք վեր անէն օր կրկնող ու Հորովող նման բարբառանքները: Իսցը գալը այն առաւելութիւնը կունենայ, որ նրանք իրենց աչքերով կտեսնեն մերկ իրականութիւնը:

Նրանք կտեսնեն, որ խորհրդային «էլեւորֆիկացիայի», «կանալիքցիայի», և լուկաշինեան մանադրժարաններին այս «լուսաւոր» օրերին, երբ «գաշնակ-մատչեբիտտներին պատեւազմներն» էլ մէշտեղը չկան, Հայ բանւորն ու զիւղացին այնպիսի վիճակ են ապրում, որ կամայ թէ ակամայ պիտի երանի տան «գաշնակների» վատ օրերից վատագոյնին: Նրանք կտեսնեն, որ փողոցներում օրը օրին բաղձա-

պատկում են անապատան երեխաները, որոնք այս ցուրտ ձմրան, կոմիսարների դռների առաջ թրև են գայիս՝ ամենահասարակ բուրժուական օդորձաւթեան անղամ չարժանանալով: Մերկ և սոված երեխաների այս բաղձութիւնը, որ այսօր Հիգնուում է իբրև «խուժան», ամենամիշտ լուսաբանութիւնն է սալիս կարծր դրօշակի իմաստին այս դրժբաղդ երկրում . .

Նրանք կտեսնեն, որ մեր Յայտկախտական էլզորագօծ մէջ անգործ աշխատաւոր տոված է, գործաւորը՝ կիսաքաղձ և միայն կոմիսարներն ու իրենց Հոճահարգներն են վայելում կեանքի բարիքները:

Վերջապէս նրանք կՀասկանան թէ ի՛նչ ասել է, «Նա. ստատիկ Ձեկտ», կՀասկանան, երբ կգան, որ մի բաւար ճէ. բողործ տիպիկը կամայականութիւնից են կարուած ոչ միայն Հայ ժողովրդի ապահովութիւնը, այլև իրենց դարձողնիդի, բբազան անձն ու բարբութիւնը . .

Այս ամէնը ու զեռ աւելին նրանց կիմանան, Կիմանան անղամ եթէ կոյր լինեն. որովհետեւ նման դէպքերում, ինչ որ աչքը լոճաւօրէն չի ուղում տեսնել՝ լսում է աւանշը, եւ լսում է ոչ թէ բուշիլիկների Հակաաւարդներից, որոնց բերանը Հաս ամուր է փակած, այլ կուսակցական ստորին Հարբերից»... Եւ երբ այս ամէնն իմանալուց յետոյ նրանք Ձեկայի ա՛խց Հոճարձակութիւն չունենան մասնաւոր նամակներով կամ այլ կերպ պօրդելու մեր իրականութիւնը իրենց արտասահմանեան բարեկամներին, թո՛ղ գէթ պարկշտութիւնն ունենան միւսնղամ ընդ միշտ պագոնմելու...

Ի դէպ՝ լոնցինը, որ մեր սիրելի ժողովրդական գուտալը — Աւետիք Բաճահետնը Հայաստան պիտի գայ: Լոնցինը, որ նրան «կենսաթշակ» էլ են նշանակել: Ձեկց բարձմանում այս լուրի վրայ: Գիտենք, որ վաղուց է. ինչ ուղում են նրան այստեղ բերել իսկ այժմ նրա գուղուն աւելի մեծ սրժէք են տալիս, քան Մերանղադէի ցալուն: Ժանկանում ենք ի սրտեմ, որ այս լուրը ճիշտ լինի: Ժանկանում ենք մեր բաւնաստեղծը աչքով տեսնի ու Համոզուի, որ իր երգած շինականը էլի նոյնն է իր Հոգով էլի նրա երգի կարտն է քո՞ւշում եւ՛, Հակառակ արհեստական աղմուկներին, գաղափօր անղամ չունի Ալաշանների գրկիցային Հայհոշուների մասին: Թո՛ղ գայ բանաստեղծը երգելու Հայ Հինկայի նոր վիշաւը. եթէ միայն թոյլ տան երգելու...

Վերջացելուց առաջ մի փորձիկ լուր եւս: Լէօի բարեկակներից մէկը յայտնում է նրան, որ ընկ. Վարսեղեանը «Հայրենիքի» էջերում դուրս է եկել նրա Հանրաճանօթ գրքի դէմ: Պատասխանը լինում է բաւական պիկանտ. — Է՛հ, Միբայէն էլ միամիտ մարդ է. ժամանակի տուրքն ենք տալիս. ի՛նչ կայ որ սրանում...

ԳԻՏՈՂ

* Այսպէս էր ճաւում Մարը Գաղաքային Խորհրդի նոյեմ 1-ի նիստին. մի ճաւ, որ յիշեցնում էր վաղուց մուտացւած աղձական կոմունիզմի շրջանի պիթալը: Ի դէպ, Հետաքրքրական կլինէր, որ մեր Ամերիկայի ընկերները ճշտէին, թէ Մարը իս բաղձազարդ շրջագալութիւնների ժամանակ քանի՞ անղամ է բաւական Ամերիկայում: Թէ՛նա երբէք 5 դոլլար չէ՛ ունեցել այնտեղ իր գրապնում...

ՌՌՌՍՍՍՍՍՐՐ ԴՐՐՐՐՐՐՐՐՐՐ ՍՍՍՍՍՍՐՐ

Սինչ այժմ Անղրկովկասի Համայնալարները բուսացման վերորերող իրենց քայիբը կոմունիստական Ֆրաղներով քօլարկում են: Եյժմ, կուսակցութեան 14րդ Համաղումարից յետոյ, դրութիւնը փոխել է Հիմովին.

այլևս կարիք չեն գտնւմ ծածկելու իրենց միտումները: Բայց այստեղ առաջնահայեցողականութիւնն է սկսել, որի առաջին հրապարակային ջանադրութիւնը մէկն է «Հայ դատարան» Ստրասբուրգի «Ջարեան վտարուհան և Վարսակախ» թիւթերում:

Կենտրոնի հրամանն է, որ Անդրկովկասի ժողովուրդները խօսեն «ճիշտագային յեղափոխութեան լեզուով» որն է սուստրեկը, և Մասկովյի ծառաները սկսել են իրենց աշխատանքը: Ջանձրալի կրկնութիւններով հրապարակում է շարունակ, թէ անդրկովկասցիներն միայն առևտրական լեզուի միջոցով կարող է հաղորդակից դառնալ համաշխարհային կուլտուրային, թէ՛ առանց ուսուցիչների՝ Անդրկովկասի բանտարարներին, թէ առևտրական դիտարկով է, որ Անդրկովկասի ժողովուրդները «եղբայրական» յարաբերութիւնները Ռուսիայ հետ կը զարգանան և այլն և այլն, Կարծես թէ արտատպւած լինի այս բոլոր նովկասի փոխարքայութեան պաշտօնաթերթ «Կովկաս»ից...

Ռուսացման քաղաքականութեան առաջին դրժն է հանդիսանում բանակը: Մինչև հիմա Առաջային կարմիր դիւղիաները՝ բաղկացած էին զուտ սեղանիներից, այժմ փոփոխութիւններ են տեղի ունենում, և, ինչ սակ կուզէ, առաջին հերթին «Հոյակաւ կարմիր դիւղիային» մէջ: Անէն մի զորագնդի մէջ ծոցնում են մի առևտրական վաշտ և որպէսզի հրամանները հասկանալի լինեն բոլոր զինուորականներին, բանակի ազգայնացման գործը դադարեցնում: Փոփոխութիւններ են կատարում նաև հրամանատարական և կոմիտարական կազմի մէջ: Այսպէս օրինակ, Երջանարտապրում, կայսերի պետը մի հրեայ է, Շիրմախէր անունով, իսկ կոմիտարը՝ առևտրական Ենեստիօր:

Ռուսացումը սեղի է ունենում սակայն առանձին ուժգնութեամբ և կուլտուրական ճակատներում: Թատրոն, գիրք Պոստի, մի խօսքով ամէն ինչ սպազգայնանում, այստեղում է թարգմանում խարձէն են գլխաւորաբար առևտրական երկիր: Ճանաչելու առևտրական հարազատ թարգմանութիւնն է: Նրա միջոցով աշխատում են ինչքան կարելի է շատ առևտրական դարձեալներին «բազաբացիութիւն» տալ: Հայերէն գիրքը, հազապիտո իսցառութեամբ, Յոսկվայի բարձրերի գործերի թարգմանութիւնն է կարծես թէ աշխարհում, նրանցից բացի ոչ ոք գիրք չի գրում կամ հրատարակում:

Այս բոլորը սակի շեշտում է Հայաստանում, քան թէ Վրաստանում կամ Արբէշտանում:

Բնորոշիչ է, որ մինչև երբ Անդրկովկասի երեք ազգութիւններից, միայն Հայերի առատիւնն է կարող մնալ կան, դարձյանքում էր դաստանդում առևտրէնը...

Հայաստան կոմունիստական ճամուլը, ինք պարտադիր բաժանորդագրութիւնը չըլինելը՝ բոլոր լին չէր հրատարակել, որովհետև «նոր» կաշառուղադրութեամբ ոչ ոք չի կարողում: Ով որ ուզում է թերթ կարդալ, կարող է առևտրական «Ջարեան վտարուհան», իսկ առևտրական չհիմնադրներն էլ թերթ գրել է չեն կարողում: Որովհետև բոլոր թերթերը պաշտօնա-

թերթեր են, ամենից ուշադրութեամբ կարող են տպել կուլտուրաները և վաճառականները, որպէսզի տեղեկ լինեն «վտարուհիներն» Այլ «վտարուհիները» զեկրեաններն են և Կոմկուսի համար պատուհաս դարձած «բանդիզմակիցները»: Նրանց համար օր ի բուն էզիկուլտուրաներն են կազմում, թէ ինչի մասին կարելի է գրել և ինչի մասին ոչ:

Ռուսացման քաղաքականութեան սրբիւնքներից մէկն էլ այն է, որ Հայաստանի «սպեցիները» (մասնագէտները) կէսը աւելին ուսուցիչ են, և այն էլ ինչպիսի՛ր՝ առևտրական իսկական ու-հարբարակային — Սրանք այժմ առատուհան կոմունիստական հրատարակութիւն ստանալով շնորհիւ «Կոմկուսի» հաստատած կարգերի՛ կոմունիստներ են դառնել: Իրեն երկազակներ, և տեխնիկներ, որոնք բնականաբար շփման մէջ պէտք է լինեն ժողովրդի հետ: Այլ պատճառով էլ, ինչպէս որ ցարերի ժամանակ զիւրը գրագիրը առևտրական իմացող պիտի լինէր սակայն իր բարոյական նկարագրից՝ այժմ էլ նրան փոխարինող զիւղական գործողը կողմնաէի քարտուղարը անպատճառ պէտք է առաջադիտի, որպէսզի Հայ դիւղապետ կարողանայ ձր էշխատութեան» հերկուլտուրացի խօսքը թարգմանել:

ՈՐՈՏ

Ա Ջ Ի

Յիշեցնում ենք Հայաստանի, խորհրդարանի և Երկրային Գործակալության և այլ հիւսուցիչների մեր աջն թափանցողներին որոնք բաժանորդագրութիւնը լրանում է առաջիկայ Յուլիսի 1ին: որ, նկատի ունենալով Հայ դարձակցութեան դժուարութիւնները, օր առաջ վերանորոգել իրենց բաժանորդագրութիւնը, որպէսզի «Դրոշակ»ի առաքման մէջ ընդհատում տեղի չունենայ:

ԴՐՈՇԱԿԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Մեր ԿՈՐԾԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԿՆԵՐԻՆ

Մամուլի տակէ և շուտով լույս կտեսնի «Դրոշակ»ի 1925 թ. № 1-ը երկրորդ տպագրութեամբ:

Մեր այն գործակալներն ու բաժանորդները, որոնք ժամանակին «Դրոշակ»ի արթնը չեն ստացել թող շտապեցն ղիմը մեզ, որպէսզի օր-առօր կարողանանք բաւարարել նրանց պահանջը:

ԴՐՈՇԱԿԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Le Gérant: E. BUAT
Imp. TURABIAN 227, BD. RASPAIL PARIS

Տես ենուկիմէի ճառք Մովկայի կուսակալուն հանդրաճարում: